

լավատեսության բարձրացմանը և կյանքի հեռանկարային գումավոր ընկալմանը՝ քաղաքային բնակչության մեծամասնության շրջանում: Մեծ ուշադրություն պետք է դարձնել այն ընկերության ապրանքանիշերին, որոնք իրենց հայեցակարգերում կիրառում են «գումավոր» մոտիվներ, սպառողների շրջանում պետք է կիրառվեն հաճախակի, որը բույլ կտա արտադրողներին նվազագույնի հասցնել առաջին գնման խթանման ծախսերը: ՀՀ տնտեսության զարգացմանն ուղղված մարքեթինգային ռազմավարության նպատակներից մեկը պետք է լինի ուղղակի մարքեթինգի միջոցով երկրի ապրանքանիշերի հեղինակության բարձրացումն արտասահմանում: Այսինքն՝ ապրանք արտադրողների հիմնական խնդիրը պետք է լինի այնպիսի ապրանքանիշերի արտահանումը, որոնք միջազգային չափանիշերին համապատասխան լինելով հանդերձ բարձրացնեն մեր երկրի նկատմամբ վստահությունն ու հեղինակությունն, ինչու չէ՞ նաև գրավչությունը:

Ժամանակակից հայաստանյան սպառողը հանդիսանում է այն փոփոխությունների հիմնական մասը, որոնք տեղի են ունենում մեր երկրում: Այդ տեսակետից ազգային տնտեսությունը գտնվում է վերելքի շրջանում՝ դիտվում է լայն սպառման ապրանքների առատություն, ներառելով տեղական բարձրորակ ապրանքանիշեր կամ այնպիսիք, որոնք արդեն վաղուց համաշխարհային համբավ են վայելում և այսօր արտադրվում են նաև մեր երկրում: Այսօր իրական է գտնել արժանի աշխատանք, մեծ հնարավորություններ կան օգտակար ժամանակ անցկացնելու, հանգստի մեկնելու, քաղաքը գնալով դառնում է ավելի մաքուր ու հմայիչ և այլ փոփոխություններ: Եվ գլխավոր փոփոխությունը մնում է այն, որ ազատ ընտրության հնարավորությունը դառնում է առավել իրականություն, ինչպես բառի քաղաքական, այնպես էլ տնտեսական իմաստով:

ՈՌԲԵՐՏ ՍԱՐԻՆՅԱՆ

*ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի թեմատիկ խմբի ղեկավար, տ.գ.դ., պրոֆեսոր*

ԱՐԴԻ ՀԱՅ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՈՒՂԵԳՇԵՐՈՒՄ

(ոչ քննական դիտողություններ)

Սույն ակնարկը պատմական ուրվագիծ է հայ տնտեսագիտական մտքի ժամանակակից ընթացքի, արժարժույթների վերաբերյալ, որը չի հավակնում ոչ վերջավորված ընդհանրացումների, ոչ էլ խիստ քննական հայացքի:

1

«Մարդկային կապիտալը հասարակության զարգացման հիմնական գործոն» (Ե., 2007) աշխատության հեղինակներ Բ. Եղիազարյանը, Ա. Գյուրջյանը և Ն. Եղիազարյանը նկատում են, թե հասարակության վերընթաց զարգացումը իբրև «օբյեկտիվ տնտեսական օրենք» առանց շեղումների չի ընթացել: Հասարակագիտական միտքը մարդկության պատմությունը ենթարկել է տարբեր պարբերացումների որպես էվոլյուցիոն հաջորդափոխության արդյունքում անցում մի իրավիճակից մի այլ իրավիճակի, որոնցից յուրաքանչյուրն ունի բնութագրիչների իր առանձնահատկությունները: Չանդրադառնալով այդ մոտեցումների վերաբերյալ վկայակոչվող մանրամասներին, նկատեն, որ նրանց հետաքրքրությունների առարկան հասարակության «անցու-

մային զարգացում» կոնցեպցիայի բնութագրերի և կառավարման հարցերն են¹: Չարգացում և անցում հասկացությունների համեմատական վերլուծության արդյունքում առաջարկվում է շրջանառության մեջ դնել «անցումային զարգացում» հասկացությունը, որը անցյալ դարի 90-ական թվականների հետխորհրդային երկրներում շուկայական տնտեսության սկզբնավորման հետ նույնանում է նոր տնտեսական անցում կամ նոր անցումային զարգացում հասկացություններին: Հեղինակները, շարադրման հնարքի առումով մախրնադել են ֆրագմենտար մեկնությունների ձևը, ուրվագծելով անցումային զարգացման առանձնահատկությունները և դրա կառավարման գործառույթները, կատարում արժեքավոր դիտողություններ: Որպես լուսանցանշում՝ ինձ թվում է հեղինակների շարադրման ձևը վկայում է մտքի որոշակի հստակության մասին, ու կարծես կադապարում վերլուծության սահմանները, երևույթները մի զգալի մասով թողնելով բնորոշումների տիրույթում, մինչդեռ իրականում առաջադրվում է նոր ուսումնասիրությունների անհրաժեշտություն:

Տնտեսագիտական մտքի մախորդ ուսմունքներում տնտեսական զարգացման չափանիշների մի որոշակի մատվածք է հայտնաբերում Ա. Հովակիմյանը, որը XX դարի կեսերից սկսաձայր է տվել այն նոր ուղղությանը, որն ստացել է «զարգացման տնտեսագիտություն» անվանումը: Իր ամենալայն իմաստով տնտեսական զարգացման ինչ-ինչ տարրեր կարելի է նշմարել մախորդ ուսմունքներում, ուստի տեղին են դիտում այն պատմական էքսկուրսը, թե մախորդ ժամանակաշրջանների տնտեսագետների վերլուծություններն ու մոտեցումները աղերսներ ունեն զարգացման տնտեսագիտությունը ներկայացնող արդի ուսումնասիրությունների հետ: Սմիթ, Մալթուս, Ռիկարդո, Մարքս, Կասսել, Կլարկ, Էդզվորդ, Մարշալ, Վիքսել, Շումպետեր, Մյուրդալ, Նուրսկեն հետազիծը ակնկալում է շեշտելու ոչ թե տնտեսական զարգացումը, այլ նկարագրելու առաջընթացը², ուր հիմնախնդիրը հանգում էր տնտեսական աճի դիտարկմանը: Այստեղ է, որ հարցերի, առաջադրությունների ընդհանուր շղթայում Ա. Հովակիմյանը փորձում է հիմնավորել տնտեսագետների մոտ տեղ գտած այն դրույթը, ըստ որի, եթե տնտեսական աճը վերաբերում է արտադրությանը, որի սահմանումն ու չափումը կապված է ՀՆԱ-ի հետ, ապա տնտեսական զարգացումը՝ վերաբերում է կյանքի որակին, ինչը բացի հասարակության անդամների նյութական բարեկեցությունից ներառում է նաև՝ առողջապահությունն ու աշխատանքային անվտանգությունը, հասարակական ակտիվությունը, քաղաքական ազատությունների ու իրավունքների պաշտպանությունը, սեռային անհավասարության աստիճանը: Հեղինակին առավել տարողունակ է ներկայանում Ջ. Միֆերի և Ջ. Դիեցի այն բնորոշումը, ըստ որի «տնտեսական զարգացումը աստիճանական գործընթաց է, որը ենթադրում է փոփոխություններ հասարակության տնտեսական ու սոցիալական կառուցվածքի մեջ, երբ յուրաքանչյուր սերունդ բարեկեցության ավելի բարձր մակարդակ ունի, քան իր մախորդները»³: Իբրև տնտեսական զարգացման չափման ցուցանիշներ են համարվում ՀՆԱ եկամուտը մեկ շնչի հաշվով և մարդկային զարգացման համաթիվը: Որքանով զարգացած երկրները անցել են կառուցվածքային և ինստիտուցիոնալ վերափոխությունների բնականոն ուղին, իսկ այս առումով զարգացող երկրների համար հիմնավոր փոփոխություններն օրակարգի խնդիր է, պահանջ է վերաբերում է զարգացման տնտեսագիտությունը:

Ստացվում է, որ զարգացած երկրներն ունեն տնտեսագիտական մտքի իրենց պարադիգման, իսկ զարգացող երկրները իրենցը, որը դեռևս գտնվում է որոնումների ու լինելիության ընթացքում: Նոր տնտեսական համակարգի ձևավորումը հակասական է, ուստի կազմավորման շրջանի հակասություններն ու տարերայնությունը հաղթահարելու համար զարգացման տնտեսագիտությունը մի դեպքում կարևորում է «կապիտալի արմատական դերը», մի երկրորդ

¹ Տե՛ս նշվ. աշխ., էջ 42-99: Նույնը՝ Բանբեր Երևանի պետական տնտեսագիտական ինստիտուտի, Ե., 2004, N 3:

² Բանբեր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի, 2007, N 1, էջ 32-33:

³ Նույն տեղում, էջ 35:

դեպքում՝ կապվում «ձեռնարկատիրոջ առաջատար» առաքելության հետ, մի երրորդ կարծիք արտադրական կարևորագույն ռեսուրսներ ձեռք բերելու խնդիրը առնչում է «արտարժույթի կանխիկ զանգվածի մեծության հետ», մի չորրորդ մոտեցում առաջադրում է «իրականացնել ակտիվ հարկաբյուջետային քաղաքականություն», այլ հեղինակներ առաջադրում են այսպես կոչված «դուալիզմ» կոնցեպցիան, որը ենթադրում է շուկայական մեխանիզմի և ավանդականի երկհատված մոդելի կիրառումը, կամ, ինչպես ասում են, «ստրուկտուրալիստները»՝ ոչ զարգացած երկրները տնտեսական կառուցվածքով և ինստիտուտներով այն աստիճան են տարբերվում զարգացած երկրներից, որ դասական տնտեսագիտության մի շարք դրույթներ դառնում են ոչ կիրառելի, հետևապես, հետազոտության օբյեկտ պետք է դարձնել ոչ թե այս կամ այն կողմը, այլ «համակարգը» և այլն: Թերևս դրանում դրսևորվում է ժամանակակից տնտեսական մտածողության առանձնահատկություններից մեկը: Տնտեսագիտական միտքը երկար ժամանակ, այսպես ասած բնականոն հաջորդափոխության պայմաններում ձևակերպում էր ընդհանուր դրույթներ, որոնք ներկայանում են որպես ընդհանուր պոստուլատներ: Մինչդեռ, ինչպես նկատում է Ն. Տիտովան, «Ժամանակակից տնտեսական գիտության ավանդը սոցիալական գործընթացների ճանաչողության վերաբերյալ մեր գիտելիքների ընդլայնման մեջ պարզապես ոչ թե հիասթափեցնում է, այլ, անկեղծ ասած, ծանծաղի է Ադամ Սմիթի, Ջոն Ստյուարտ Միլի, Կարլ Մարքսի, Թորսթայն Վեբերի, Ալֆրեդ Մարշալի, Ջոն Մեյնարդ Էնգելսի կամ Բյոզեֆ Եունայտերի կողմից արվածի համեմատությամբ: Եթե ժամանակակից տնտեսագիտության տեսության մասին դատելու լինենք նրա փիլիսոփայական և պատմական բովանդակության առումով, ապա ստիպված կլինենք նրա տեղը որոշելու նադիրում, այլ ոչ թե նրա պատմության գեներում»¹:

Սոցիալական օրգանիզմը մի ամբողջություն է որտեղ միավորված է տնտեսությունը, իրավունքը, բարոյականությունը, քաղաքականությունը, մշակույթը: Օբյեկտ ունենալով զարգացած երկրների տնտեսագիտական մտքի ավանդույթները, հաճախ զարգացող երկրների համար չափանիշ է ընդունվում դրանց տնտեսական մտքի սահմանումները: Մինչդեռ յուրաքանչյուր երկրի տեսական զարգացման ընթացքը խիստ առանձնահատուկ է, ուստի ընդհանուր սկզբունքների կիրառումը պարտադրում են որոշակի վերապահություններ: Հենց դրա մեջ է Ա. Հոփսկինյանը տեսնում զարգացման տնտեսագիտության այն առանձնահատկությունը, որ «տնտեսական զարգացման վերաբերյալ մեկ ամբողջական տեսություն չի ձևավորվել թերևս այն պատճառով, որ առանձին տեսությունները, մոդելներն ու վարկածները մշակվել են՝ հիմնվելով կոնկրետ երկրների (կամ դրանց խմբի) փորձի վրա»²: Արդյո՞ք հաշվի են առնվել այս կամ այն երկրի առանձնահատկությունները, ինչի համար շուրջ երկու դար առաջ պայքարում էր պատմական դպրոցը: Հետխորհրդային երկրների վերափոխությունները այնքան հանկարծախաս էին, որ որոնումներն ու ավերվածությունները դարձան միաժամանակյա գործընթացներ: Զարգացման տնտեսագիտությունը դեռևս չունի իր պատմությունը (իր այսօրվա ընթերցումների մեջ - Ռ.Ս.) կամ կարճ պատմություն ունի, որում դեռևս հստակ չեն ձևավորվել մեթոդաբանական իր ավանդները: Տնտեսական իրականության որակական բազմազանությունները ժամանակակից տնտեսագիտության կարևորագույն հատկանիշներից են: Տնտեսագիտության տեսությունը ապրում է ճգնաժամ, թե տնտեսական երևույթների ճանաչողական շերտերի ընդլայնման հետ տեղի է ունենում «տեսական որոնումների տեսադաշտի ընդլայնում»: Հայտնի տնտեսագետ Ջ. Հիկսը գրում է. «Մեր տեսությունները որպես վերլուծության գործիքներ գործում են աչքակալների մոտ...: Քաղաքավարի ասած դրանք լույսի շողեր են, որոնք լուսավորելով օբյեկտի որոշակի մասերը, մյուսները թողնում են խավարում: Օգտվելով այդ տեսություններից, մենք հայացք ենք թերում երևույթներից, որոնք կարող են էական լինել, որպեսզի հստակ

¹ Н. Е. Титова, История экономических учений, М., 1997, с. 255.

² Բանբեր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի, 2007, N 1, էջ 43:

ճանաչենք այն, որին արդեն սկսելով է մեր հայացքը: Կասկած չկա, որ հենց այդպես էլ պետք է վարվել, այլապես մենք շատ քիչ կտեսնենք: Բայց ակնհայտ է նաև տեսության ճիշտ ընտրության կարևորությունը, որպեսզի այն կարողանա բավարար չափով կատարել այդպիսի գործառույթ: Այլապես այն կլուսավորի ոչ այն, ինչը անհրաժեշտ է...: Որքանով մենք ուսումնասիրում ենք փոփոխվող աշխարհը, տեսությունը, որը մի ժամանակ լուսավորում էր ճիշտ ուղղությամբ, մի այլ ժամանակ կարող է լուսավորել ոչ ճիշտ ուղղությամբ: Դա կարող է տեղի ունենալ՝ կապված աշխարհում (երևույթները, որոնք անտեսվել են, կարող են դառնալ ավելի կարևոր, քան այն, որոնք արժանացել էին ուշադրության) կամ մեր մեջ կատարվող փոփոխությունների հետ...: Կյանքի բոլոր դիպվածների համար տնտեսագիտական տեսությունն զուցե և գոյություն չունի»¹: Եթե միայն այդպես է, ապա դա լավագույն տարբերակն է:

2

Գրականության մեջ տարածաշրջանային տնտեսագիտության առարկայի վերաբերյալ առկա են տարբեր տեսակետներ: Համաձայն մի հայեցողության՝ դա տնտեսագիտության մի կոնկրետ բնագավառ է, որի ուսումնասիրության առարկան երկրի տարածաշրջանային օրինաչափություններն են, տնտեսական ու սոցիալական գործոնները: Մի այլ տեսակետ գլխավոր խնդիրը տեսնում է արտադրողական ուժերի տեղաբաշխման ռացիոնալացման մեջ: Մի երրորդ կարծիք ընդլայնում է առարկայի քննության շրջանակները՝ ներառելով և մեկը և մյուսը: Մի չորրորդ դեպքում խոսվում է, այսպես կոչված, «տարածականության տնտեսագիտության ձևավորման մասին»²: Սակայն անկախ նման տարակարծություններից, տնտեսագիտական միտքը առարկայական տարբեր առնչությունների մեջ անդրադարձել է տարածաշրջանի այս կամ այլ հարցերի քննությանը, գրանցել որոշակի հետազոտական արդյունքներ:

* * *

Երկրի վարչատարածքային բաժանումը անմիջականորեն առնչվում է այնպիսի մի խնդրի հետ, ինչպիսին տնտեսական արդյունավետությունն է: Ինչպես նկատում է Ս. Մելքումյանը, «Վարչատարածքային՝ գիտականորեն հիմնավորված բաժանումը յուրաքանչյուր երկրի սոցիալ-տնտեսական, ռազմավարական նպատակասլաց քաղաքականության իրականացման նախապայմանն է: Այն վճռական դեր է խաղում տվյալ պետության կենտրոնական իշխանության տնտեսական, սոցիալական, ռազմական քաղաքականությունը վարչական բոլոր միավորումներում ճկուն ու նպատակասլաց իրականացնելու համար»³: Ինչպես ասում է Ա. Արասխանյանը, ազգային տնտեսությունը պետք է ներկայացնի «օրգանապես առողջ ամբողջություն»: Ընդհանրապես, երկրի վարչատարածքային բաժանումը ենթադրում է բազմաթիվ գործոնների հաշվառում տվյալ ժամանակի և զարգացման տվյալ փուլի պահանջներին համապատասխան: Եվ ինչպես ցույց է տալիս այլ երկրների փորձը, վարչատարածքային վերաբաժանումները միշտ ուղեկցել են տնտեսական պատմությանը: Այն Հայաստանի Հանրապետությունում մույնպես ունեցել է իր նախապատմությունը: Չանրադառնալով նրա թերություններին, ինչպես նաև որոշակի դրական նշանակությանը, տարածաշրջանների զարգացման առումով իր շատ մասերով 1995թ. մարզային բաժանումը կատարվել է կամայական հիմքի վրա: Նոր տնտեսական համակարգը, բնականաբար, պետք է ուղեկցվեր արժեքների վերագնահատումներով, ելակետ ունենալով տարածաշրջանների մակարդակների հավասարեցման, միջտարածքային՝ հատկապես հանրապետության տնտեսական կապերի ռացիոնալացումը: Իսկ այն շատ

¹ Sh'u Философия социальных и гуманитарных наук, М., 2006, с. 382-383.

² А. В. Андреев, Л. М. Борисова, Э. В. Плучевская, Основы региональной экономики, М., 2008, с. 8-9.

³ Բանբեր Երևանի պետական տնտեսագիտական ինստիտուտի, 2004, N 2, էջ 141:

հարցերում չնայածեց հանրապետության սոցիալ-տնտեսական խնդիրների լուծմանը, որը ինչպես նկատում է Ս. Մելքումյանը, պետք է բացատրել ռեֆորմ իրականացնողների կողմից որոշակի սկզբունքների անգիտությամբ: Մասնավորապես անհրաժեշտ էր.

«ա) հաշվի առնել հանրապետության տիպիկ լեռնային բնույթը, նրա ռելիեֆային բարդ կառուցվածքը,

բ) տվյալ տարածաշրջանի վարչատարածքային միավորի աշխարհագրական դիրքի յուրահատկությունը,

գ) կլիմայական պայմանների բազմազանությունը և հանրապետության փոքր տարածքում վերընթաց գոտիականության առանձնահատկությունները,

դ) միասնական տրանսպորտային համակարգի առկայությունը,

ե) տնտեսության ճյուղերի մասնագիտական ընդհանրությունը,

զ) պատմականորեն ձևավորված մյուս ենթակառուցվածքների ընդհանրությունը և այլն»¹: Այս հիմքի վրա էլ առաջարկվում է հանրապետության վարչատարածքային բաժանման նոր քարտեզ²:

* * *

Հարկ է նկատել, որ տարածքային կառավարման սկզբունքը խորթ չէր հայոց երկրի պատմությանը: Ինչպես նկատում է Յու. Սուվարյանը, դեռևս հնագույն ժամանակներից սկսած հայ տեսական միտքը փորձեր է արել «մշակել պետական կառավարման իրավական հիմունքները»³:

Ինչպես ինքնակառավարման տեսությունն, այնպես էլ պրակտիկան տարբեր երկրներում ունեցել են իրենց առանձնահատկությունները: Օրինակ՝ համաձայն համայնքի ազատ (բնական) տեսության, համայնքն առաջնային է պետության նկատմամբ, ուստի վերջինս պետք է հարգի համայնքային կառավարման ազատությունը, խնդիրները լուծելու նրա իրավունքը նույնքան բնական է, ինչպես և մարդու բնական իրավունքները: Ինքնակառավարման պետական տեսությունը «ինքնուրույնությունը դիտարկում է որպես պետական կառավարման համակարգի բաղկացուցիչ, օրգանական մաս»: Այսպիսով, ընդհանրացնում են Յու. Սուվարյանը և Մ. Չոբանյանը, տարածքային կառավարման համակարգերը իրենց պատմական փորձի մեջ հարստացել են նոր գծերով, մշակվել են նոր սկզբունքներ, ձեռք բերել որոշակի տարբերիչ առանձնահատկություններ, որոնք հանգում են տեղական իշխանության ձևավորման եղանակին, կենտրոնական իշխանության հետ նրա ունեցած փոխհարաբերությունների բնույթին և տեղական իշխանության ենթակայության գործերի էությանն ու ծավալին⁴: Մոտեցումների հենց այս ընդհանուր շղթայում է, որ տնտեսագետները հիմնավորում են տեղական ինքնակառավարումը՝ իբրև քաղաքացիական ու իրավական հաստատության դերը քաղաքացիական հասարակության ձևավորման ու զարգացման գործում: Հիմնավորված է ներկայանում օրենսդրամորմատիվային և կազմակերպաֆինանսական նորոգություն ենթադրող հետևյալ խոչընդոտների հաղթահարումը.

«- գործող մարզային կառավարման համակարգը չունի գործադիր իշխանությանը հակակշռող ներկայացուցչական մարմին, ինչը հանրային արդյունավետ կառավարման կարևոր սկզբունքներից է,

- տարածքային կառավարման մարմինները չունեն ֆինանսական ինքնուրույնություն, քանի որ իբրև պետական կառավարման մարմիններ՝ ֆինանսավորվում են պետական բյուջեից,

¹ Նույն տեղում, էջ 143:

² Նույն տեղում, էջ 145:

³ Յու. Սուվարյան, Հանրային կառավարման տեսության ու պատմության ուրվագծեր, Ե., 2004, էջ 13:

⁴ Տե՛ս Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները ՀՀ-ում (գիտաժողովի նյութեր), Ե., 2007, էջ 165:

- օժտված լինելով լուրջ և ծավալուն լիազորություններով, մարգային կառավարման մարմինները աշխարհագրական առումով հեռացված են կառավարման օբյեկտներից (համայնքներից և բնակչությունից), միաժամանակ չափազանց ընդարձակ է վերահսկողության գոտին (համայնքների թիվը ըստ մարզերի տատանվում է 44-ից մինչև 119),
- թեև տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման գործող համակարգը պետական կառավարման որոշ գործառնությունների անհրաժեշտ ապակենտրոնացման հաջողված տարբերակ է, սակայն 926 համայնքներում առկա կադրային ներուժն ու ֆինանսական սուղ ռեսուրսները սահմանափակում են համայնքային կառավարման արդյունավետության բարձրացման հնարավորությունները¹ :

Հեղինակներն իրենց վերլուծությունները ստուգաբանում են համապատասխան՝ վիճակագրական տեղեկատվությամբ և այլ երկրների փորձով, հիմնավորում տարածքային կառավարման նոր հայեցակարգի ընդունման անհրաժեշտությունը, որը ենթադրում է անցում գավառային կառավարման և երկաստիճան տեղական ինքնակառավարման համակարգին: Վերը նշվածը տարածքային կառավարման համակարգի արդի գործունեության ընթացքից բխող սոսկ թերությունների արձանագրություններ չեն, այլ որոշակի հետևողականությամբ կատարված դիտողություններ, որոնք իրենց ամփոփումը գտնում են տարածքային կառավարման և վարչատարածքային բաժանման նոր հայեցակարգով տեղական ինքնակառավարման կազմակերպական կառուցվածքի առաջարկությամբ:²

* * *

Շուկայական տնտեսակարգի պայմաններում առաջնային նշանակություն են ստանում տնտեսական լծակները՝ տնտեսության կառավարման արդյունավետությունը պայմանավորելով օրենսդրական դաշտի կատարելագործման հետ: Տնտեսական ամբողջական համակարգը որոշակի բաղադրիչների համակարգ է՝ պետական և մասնավոր կազմակերպությունները, տնտեսության ոլորտներ, տարածաշրջաններ՝ որպես հարաբերաբար առանձնացված ու յուրահատուկ սոցիալ-տնտեսական միավորներ: Յուրաքանչյուր տարածաշրջան, լինի դա մարզ, գավառ թե շրջան, առանձնանում է իր բնակլիմայական, հանքահումքային ռեսուրսներով, ժողովրդագրական ցուցանիշներով, տնտեսության զարգացման մակարդակով, ավանդույթներով և այլն, որոնք, սակայն, իրենց առանձնահատկություններով հանդերձ ներկայացնում են միասնական տնտեսական տարածություն, ազգային տնտեսության միասնական տարածք: Հետևապես, դրանք բոլորը հանգուցային թելերով կապված են միմյանց հետ՝ որպես նշված առանձնահատկությունների յուրահատուկ փոխկախվածություն և ինտեգրացիա: Ազգային տնտեսության ներուժը ներկայացնում է տարածքային ներուժերի ամբողջությունը, վերջիններիս հնարավորությունները՝ որոնք կապված որոշակի գործոնների առկայության հետ, ստանում են առաջնային նշանակություն: Այստեղ է, որ պահանջվում է հարցերը քննության ենթարկել ինչպես այս կամ այն տարածաշրջանի կտրվածքով, այնպես էլ լայն տեսադաշտի մեջ: Հենց այդ նպատակն է հետամտում Յու. Մ. Սուվարյանի և Մ. Խ. Չոբանյանի «Տնտեսության տարածքային կառավարում. մեթոդաբանությունը և հիմնահարցերը» (Ե., 2007) աշխատությունը: Նրանում «... վիճակագրական նյութերի լայն օգտագործմամբ վերլուծվել և գնահատվել են տարածաշրջանների տնտեսության, այդ թվում՝ արդյունաբերության, գյուղատնտեսության զարգացման միտումները, առանձնահատկությունները, սպասարկման ոլորտի կազմակերպությունների տարածքային տեղաբաշխման արդի վիճակը, ինչպես նաև լուծում պահանջող

¹ Նույն տեղում, էջ 165-166:

² Նույն տեղում, էջ 168:

հիմնախնդիրները»¹: Հեղինակները այս դիտակետից էլ ուրվագծում են հանրապետությունում արդյունաբերական արտադրության և գյուղատնտեսության զարգացման տարածքային միտումները:

3

Տարիներ առաջ լույս է տեսել Վ. Հարությունյանի «Հարկային քաղաքականությունը և նրա կատարելագործման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում» (2003) և «Բյուջետային քաղաքականությունը և նրա կատարելագործման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում» (2003) մենագրությունները, որոնք ուրվագծում են հանրապետության նոր հարկային համակարգի լինելիության պատմությունը: Սակայն դրանք ուրվագծեր չեն, որոնցում սոսկ գրանցում են ստացել հարկային վերափոխումների խրոնոլոգիան օրենքների մեջ, այլ որոշակի հայացքով դիտողություններ, որոնցում կատարվում են առաջարկություններ՝ քիրայս ունենալով համակարգի ապագա կատարելագործման ուղղվածությունը, կապեր հայտնաբերելով արդի որոնումների պահանջների հետ: Տնտեսագետը իրավացիորեն հարկային քաղաքականության հաջողությունը պայմանավորում է երկրի տնտեսական ու քաղաքական մթնոլորտի հետևյալ կողմնորոշիչներով. մակրոտնտեսական վարքի կանխատեսում, մակրոտնտեսական առկա իրավիճակի գնահատում, մակրոտնտեսական ցուցանիշների արժանահավատություն, երկրից դուրս կատարվող տնտեսական զարգացումների ճանաչողություն, երկրի ներսում և նրանից դուրս իրականացվող քաղաքական գործընթացներ²: Նշված քաղաքական հաշվառումը բարդ խնդիր է, իսկ առավել բարդ նոր տնտեսական համակարգին անցնելու փուլերում:

Անցած 90-ական թվականներից սկսած կարծես չափանիշ էր դարձել տնտեսության այս կամ այն ոլորտի վերափոխումները արդարացնել որևէ տեսությամբ կամ որևէ երկրի փորձով: Թեև որոշակի դեպքերում դրանք ունեցել են նաև քայքայիչ հետևանքներ: Իրավացի են Վ. Հարությունյանն ու Ա. Թամազյանը, նկատելով թե. «Բնականաբար, մենք չենք ժխտում արտասահմանյան հարուստ փորձի օգտագործման կամ տրամաբանական մտածելակերպի անհրաժեշտությունը, ավելին՝ մեր շատ տեսակետներ արտահայտված են հենց այս հարթության վրա, սակայն խնդիրն այն է, որ ՀՀ-ում առկա համայնքային սոցիալ-տնտեսական զարգացման մի շարք արդի հիմնախնդիրների լուծման առումով այդ մոտեցումները բավարար չեն: Մասնավորապես, խոսքը վերաբերում է ՀՀ համայնքների մեծ մասի փոքր մասշտաբներին (որոնք, միաժամանակ, գրեթե զուրկ են ինքնուրույն զարգացման հնարավորություններից), համայնքային բյուջեների ձևավորման սկզբունքներին ու մեխանիզմներին (որոնք սահմանված են՝ առանց համայնքների ոչ միայն հարկային, այլև ընդհանուր առմամբ՝ նրանց սոցիալ-տնտեսական ներուժի մասին պատկերացում ունենալու), ֆինանսական համահարթեցման դոտացիաների հաշվարկման ու բաշխման մեթոդներին (կարծես դրանք, ըստ էության, շատ քիչ կապ ունեն առկա իրողությունների հետ, սակայն խնդիրն այդպես էլ լուրջ քննարկումների չի արժանանում) և այլն»³: Սույն նկատումը իր մեջ պարունակում է նաև աշխատության մեջ քննարկվող հարցերի շրջանակները: Իբրև ելակետային դրույթ՝ սոցիալ-տնտեսական ներուժ (USՆ) հասկացության սահմանների ճշգրտումն է: Հեղինակները ոչ թե քմահաճորեն ժխտում են գրականության մեջ այդ հասկացության վերաբերյալ տեղ գտած բնորոշումները, այլ քննական հայացքի պարտադրանքով անդրադառնում վերջին տասնամյակներին տարբեր հեղինակների կողմից հարցի արծարծումներին: Այդ բնորոշումների պատմությունն անհրաժեշտ է՝ ցույց

¹ Նշվ. աշխ., էջ 6:

² Վ. Հարությունյան, Հարկային քաղաքականությունը և նրա կատարելագործման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում, Ե., 2003, էջ 9:

³ Վլադիմիր Հարությունյան, Արթուր Թամազյան, Համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման և ֆինանսական հիմնախնդիրների լուծման ուղիները, Ե., 2008, էջ 6:

տալու շեշտադրման փոփոխությունը հարցի մեկնության մեջ, ներուժը դիտարկելու ոչ թե որպես «առավելագույն թողարկման», այլ «ինքնագարգացման» ունակություն: Ուստի «ճիշտ կլինի սոցիալ-տնտեսական ներուժը սահմանել որպես ռեսուրսների և հատկությունների ամբողջություն (համախումբ), որոնք որոշում են սոցիալ-տնտեսական համակարգի կայուն և արդյունավետ գործողության հնարավորությունները՝ արտաքին փոփոխվող պայմաններում»¹:

Տնտեսագետ Մ. Պորտերը գտնում է, թե իր կողմից առաջադրվող «ազգերի մրցակցային առավելությունների» տեսությունը իր ընդգրկումների մեջ ավելի լայն է, քան համեմատական առավելությունների տեսությունը: Այն ներկայացնում է երկրի մրցունակության որոշակի գործոնների համախումբ (արտադրության գործոններ, պահանջարկի պայմաններ, հարակից և սպասարկող արտադրությունների առկայությունը, ձեռնարկությունների ռազմավարություն, կառուցվածք և մրցակցություն): Նույն տրամաբանությամբ՝ եթե ուսումնասիրության առարկան տարածաշրջանն է, ապա «շուկայական տնտեսության պայմաններում տարածաշրջանի ՄՏՆ-ի գնահատումը նախ և առաջ պետք է կայանա տարածաշրջանային զարգացման այն գործոնների գնահատման մեջ, որոնք արտացոլում են տվյալ տարածաշրջանի մրցակցային առավելությունները»²: Իսկ այդ գործոնները վերաբերում են՝ տարածքի, բնակչության և տնտեսության քանակական ու որակական բնութագրիչներին: Ինչպես հայտնի է, մեթոդաբանությունը այն եղանակն է, որի միջոցով սահմանվում է հարաբերությունը տեսության և իրականության միջև: Վ. Հարությունյանի և Ա. Թամազյանի հետազոտական մեթոդը հայտնաբերում է որոշակի առավելություններ, մասնավորապես այն բարձրանում է էմպիրիզմի հարթությունից՝ իր լուծումների մեջ շարժվելով տեսականից դեպի իրականը:

Խոսքը վերաբերում է համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի կազմման մեթոդաբանական մոտեցումներին ու դրանց իրականացման կազմակերպական իրավական հիմքերի կատարելագործման ուղիներին: Համայնքների սոցիալ-տնտեսական և ֆինանսական հիմնախնդիրները, լուծումների փոխզիջումային տարբերակները միշտ էլ ենթակա են հակասական լուծումների տրամաբանությանը: Կարծես դարձել է օրինաչափություն, երբ ստորադաս բյուջեների ծախսերը գերազանցում են եկամուտներին, արդյունքում ֆինանսական ինքնուրույնության հիմնախնդրի լուծման ասպարեզը դառնում է «միջբյուջետային հարաբերությունների դաշտը», իսկ նրա հիմնական գործիք՝ միջբյուջետային դրամաշնորհները: Արևմտյան փորձը և տնտեսագիտական միտքը հատկապես առանձնացնում են ստորադաս բյուջեներին դրամաշնորհներ հատկացնելու երկու խումբ մոդելներ: Սակայն, ինչպես դրամաշնորհների տեսակների, այնպես էլ տրամադրման մեխանիզմի առումներով, դրանք նույնպես պարունակում են անկատարություններ. «...միջբյուջետային հարաբերությունները, - համապատասխան վերլուծությունների արդյունքում եզրակացնում են Վ. Հարությունյանը և Ա. Թամազյանը, - ստորադաս բյուջեներին ամրակցված եկամուտների մատով, անհրաժեշտ է կառուցել այնպես, որ այն հնարավորություն տա իշխանության կառավարման ստորադաս մարմիններին իրենց բյուջեները կազմել և հաստատել մինչև ֆինանսական տարվա սկիզբը, ինչն արվում է վերադաս բյուջեների պարագայում, որը նաև հնարավորություն կստեղծի իշխանության ստորադաս մարմինների համար՝ բարձրացնելու սեփական եկամուտների զանձեղության արդյունավետությունը: Նշենք նաև, որ միջբյուջետային հարաբերությունների կատարելագործման կարևոր քայլ է նաև ստորադաս բյուջեների հարկման բազայի ընդլայնումը խթանող հատուկ համակարգի ստեղծումը»³:

Ժամանակակից գերմանացի թատերագիր Պատրիկ Ջյուսկինգը նկատում է, թե «Մարկիզը ... առաջարկել է հողի սեփականության և գյուղատնտեսական արդյունքների վրա դրվող բոլոր

¹ Նույն տեղում, էջ 24:

² Նույն տեղում, էջ 26:

³ Նույն տեղում, էջ 144:

հարկերը վերացնել, ինչպես նաև մտցնել հակադարձ համամասնական եկամտահարկ, որը ամենից ուժգինը կհարվածի աղքատներին և դրանով իսկ կստիպի նրանց ավելի եռանդագին լինելու իրենց տնտեսական ակտիվության մեջ»¹: Հարցադրումը ընդհանրություններ է հայտնաբերում տեղական վարչատարածքային միավորների եկամուտների ձևավորման խնդրի հետ:

Աշխատության մեջ բերվող տարբեր երկրների փորձը համայնքային բյուջեների եկամուտների ձևավորման աղբյուրների վերաբերյալ, ենթադրում է համաշխարհային որոնումներին հաջորդակցվելու անհրաժեշտությունը, առաջադրելով համայնքային բյուջեների ֆինանսական ինքնուրույնության ապահովման հետևյալ ծրագրային մոտեցումները².

- «օրենքով իշխանության հանրապետական, մարզային ու տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունների հստակ սահմանազատումը,
- ՀՀ վարչատարածքային բաժանման համակարգի կատարելագործումը, համայնքների խոշորացումը և բյուջեների ծավալների օպտիմալացումը,
- տեղական ինքնակառավարման մարմինների կամավոր և պետության կողմից պատվիրակված, բայց ռեալ ֆինանսավորում չունեցող լիազորությունների վերացումը,
- իշխանության տարբեր մակարդակների միջև ծախսերի պլանավորման իրավասությունների հստակ ամրագրում և դրանց ֆինանսավորման աղբյուրների, ֆինանսավորման կարգի օրենսդրորեն ամրագրումն ընդունվելիք բյուջետային օրենսգրքում,
- իշխանության բոլոր մակարդակների բյուջեների ֆինանսավորվող աշխատանքների և մատուցվող ծառայությունների արժեքային ու բնեղեն նորմատիվների օրենսդրորեն սահմանումը,
- համայնքային բյուջեներին ամրակցված հարկատեսակների գծով հարկման բազաների ու հարկային դրույքաչափերի որոշման իրավասությունների փոխանցումը տեղական ինքնակառավարման մարմիններին՝ այդ հարկատեսակների գծով ՀՀ ԱԺ կողմից օրենքով նվազագույն և առավելագույն մեծությունների սահմանման պարագայում,
- համայնքային բյուջեների եկամուտների աղբյուր հանդիսացող տեղական տուրքերի և վճարների անվանացանկի ընդլայնումը և ոչ հարկային եկամուտների այլընտրանքային տեսակների ընդլայնումը,
- համայնքային բյուջեներին ամրակցված հարկերի հաշվառման ու դրանց նկատմամբ վերահսկողության իրականացման իրավասությունների՝ հարկային մարմիններից տեղական ինքնակառավարման մարմիններին փոխանցումը և այլն»³:

Բերված դիտողությունները նորից ու նորից շեշտում են տեղական ինքնակառավարման հաստատության ձևավորման ու տեղական բյուջեների ֆինանսական ապահովվածության հիմնախնդրի կարևորությունը: Դա այն հիմնական հարցերից է, որը տեսական ու գործնական իր ամբողջ նշանակությամբ բարեփոխումները տեղական ինքնակառավարման համակարգում դարձրել է առաջնահերթ, որի արդյունքում կընդլայնվեն տնտեսության պետական կարգավորման հնարավորությունները, տնտեսական ու սոցիալական հարցերի լուծումներին տալով դիմամիկ բնույթ: Իսկ ինչ մոդել կիրառել համայնքների համար անհրաժեշտ ֆինանսական նախադրյալների ստեղծման համար: Բարդ ու հակասական մի հանգույց է սա, պայմանավորված ոչ միայն ֆինանսական ռեսուրսների ապահովվածության տարբեր մակարդակների, այլև բնակլիմայական, աշխարհագրական, ժողովրդագրական, սոցիալ-տնտեսական առանձնահատկություններով: Մանավանդ, եթե հաշվի առնենք, որ բյուջետային ցուցանիշների կանխատեսման հաշվարկները, ի տարբերություն տարեկան բյուջետային ցուցանիշների հիմնված են

¹ Е. А. Киселева, Макроэкономика, М., 2006, с. 258.

² Նշված հարցերի բնությունը տես նաև Վ. Լ. Հարությունյան, Ա. Հ. Ազիզյան, Ֆինանսական համահարթեցման հիմնախնդիրները (Ե., 2008) աշխատությունը:

³ Վլադիմիր Հարությունյան, Արթուր Թամազյան, նշվ. աշխ., էջ 213-214:

մեթոդաբանական այլ մոտեցումների վրա: Որոշումների առումով Վ. Հարությունյանը և Ա. Ազիզյանը սահմանափակումներ չեն տեսնում ու չվիճարկելով այս կամ այն մեթոդի առավելության հարցը, կիրառական դիտելով և էքստրապոլիացիայի մեթոդը՝ որը թույլ է տալիս անցած ժամանակաշրջանի ցուցանիշների փոփոխությունների միտումների հիման վրա որոշել սպասվող մեծությունները, տվյալ դեպքում խոսքը վերաբերում է համեմատաբար կայուն բնույթ ունեցող բյուջեի եկամուտների և ծախսերի հոդվածների կանխատեսմանը, և փորձագնահատման մեթոդը՝ հիմնված գիտական հետազոտությունների արդյունքների կամ պրակտիկ փորձի հիման վրա, կամ էլ երկու մեթոդները միասին¹:

Միջբյուջետային բարեփոխումներն իրենց լուծումների մեջ կախված կլինեն հարկային մասհանումների մոդելի ընտրությունից: Եվ հեղինակները փորձում են ուրվագծել վերջինիս հետագա ուղղությունները. մի դեպքում կիրառական դիտելով գերմանական հարկային մասհանումների մոդելի ձևափոխված տարբերակը, մի այլ դեպքում՝ այսպես կոչված «միատուլի» մոդելը, կամ էլ հանրապետության համայնքային բյուջեներ ԱԱՀ-ից, շահութահարկից և եկամտահարկից մասհանումներ կատարելու համակարգի ներդրումը²: Իրողություն է, որ հանրապետությունում «բյուջետային համակարգում առաջարկվող եկամուտները համայնքների եկամտային դաշտին ամրակցելու և փոխանցելու արդյունավետ մեխանիզմներն առայժմ բացակայում են»³: Իսկ դա ցուցադրում է համակարգի կատարելագործման պահանջը:

4

Հազիվ թե կարելի է գտնել տնտեսագիտական որևէ դպրոց, որը այս կամ այն չափով չանդրադառնար փողի տնտեսական ու սոցիալական դերի հարցերին: Հատկապես, սկսած տնտեսական էվոլյուցիայի այն փուլից, երբ փողը լոկ շրջանառության միջոցի ֆունկցիայից սկսել է վերաճել տնտեսական անկումները և վերելքները պայմանավորող ազդակի: Մի դեպքում այն համարվում էր որպես հարստության չափանիշ, մի այլ դեպքում չարիքների պատճառ, մի երրորդ տեսակետ՝ տնտեսական կյանքի կարգավորիչ և այլն: Եվ ոչ պատահականորեն, շուկայական հարաբերություններին անցնող երկրներում փողի ֆենոմենը նորից իր վրա սևեռեց տնտեսագիտական մտքի ուշադրությունը, փորձելով կատարվող փոփոխությունների ու հակասությունների պատասխանները. որոնք փողի վերաբերյալ տեսություններում: Այս համատեքստում էլ Ա. Պետրոսյանը քննարկում է փողի շուկայի գործունեության առանձնահատկությունները՝ կապված գնաճային գործընթացի կառավարման հարցերի հետ: Ինչպես հայտնի է, Արիստոտելը նշել է փողի որոշ ֆունկցիաների մասին: Սակայն, փողի շուկայի գործունեության մեթոդաբանական հիմքերը վերաբերում են տնտեսական էվոլյուցիայի կապիտալիստական տնտեսաձևի և առաջին տնտեսական ուսմունքների ձևավորման ժամանակաշրջանին, այսինքն այն ժամանակաշրջանին, ինչպես նկատում է Ա. Պետրոսյանը, երբ «իրենց մոտեցումներում տնտեսագետները սահմանում են փողի զանգվածի և տնտեսական փոփոխականների տարբեր կապեր ու կախվածություններ»: Անդրադառնալով փողի առաջացման վերաբերյալ ռացիոնալիստական և էվոլյուցիոն տեսություններին, մի դեպքում ընդգծվում է «սուբյեկտիվ պատճառի նշանակությունը», մի այլ դեպքում՝ շեշտվում տարերային գործընթացի դերը, ի վերջո այն դիտելով որպես օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների միահյուսման արդյունք: Նկատենք, որ տնտեսագիտական գրականության մեջ առ այսօր էլ հաճախ անջատման սահմաններ է գծվում՝ միակողմանի մեկնություններ տալով օբյեկտիվին ու սուբյեկտիվին: Ոչ պատահականորեն առանձնացվում է նաև սուբյեկտիվ-հոգեբանական կոնցեպցիան, ըստ որի փողը ոչ այլ ինչ է, քան «արհեստական սոցիալական պայմանավոր-

¹ Տե՛ս Վ. Լ. Հարությունյան, Ա. Հ. Ազիզյան, Ֆինանսական համահարթեցման ..., էջ 60-61:

² Այդ մասին հանգամանորեն տե՛ս նույն տեղում, էջ 72-78:

³ Նույն տեղում, էջ 80:

վածություն» (Մամուլետն) կամ «մարդկանց միջև համաձայնության արդյունք» (Գելբրեյթ): Այս տեսակետը ոչ թե անտեսում է տարերային առանձնացման փաստը, այլ պարզապես արստրահվում է դրանից:

Դրամական ֆեմոմենը իր բնույթով հակասական է: Այս առումով առանձնացվում են երեք տարբերակներ. կոնցեպտուալ, վերարտադրողական (մարքսյան) և փորձարարական: Հեղինակը սխալական է դիտում փողի գործառնությունների քննության ժամանակ հիմք ընդունել այս կամ այն գործոնի դերը, նախապատվություն տալով եվրոպական դրույթին, որն առավել ընդգրկում է «արտացոլում շուկայական տնտեսության մակրո և միկրո գործընթացների փողով միջնորդավորված ողջ բազմազանությունը»: Համոզիչ չի ներկայանում փողի էության և Մարքսի կողմից փողի գործառնություններին երկրորդական դեր հատկացնելու պատկերացումը: Ընդհանրապես, փողի էությունը իր իրացումները գտնում է նրա ֆունկցիաներում: Եվ կարծիքը, թե փողի՝ որպես ընդհանրական համարժեքի դեր կատարող հատուկ ապրանքի, էության սահմանում ճշմարիտ է իրական, լիարժեք փողերի ժամանակաշրջանի համար, չի կապվում «փողի էության և ֆունկցիոնալ ձևերը շփոթելու» հետ:

Հարկ է նկատել, որ մտահայաց վերլուծությունը տեսական տնտեսագիտությանը բնորոշ եղանակներից է, մի հարթություն, երբ կատեգորիաները սկսում են գործել տեսության մեջ, սակայն շնորհիվ որի իրական գործընթացները կմնային անհասկանալի: Ա. Պետրոսյանը ոչ թե սկզբում տալիս է հարցի տեսությունը, իսկ այնուհետև անցում կատարում էմպիրիկ վերլուծություններին: Նրա մոտ տեսական ստուգաբանությունը բնորոշ է ամբողջ շարադրանքին ուրվագծելով փողի քանակային տեսությունը սկսած նրա ակունքներից՝ մերկանտիլիստներից, այնուհետև դասական ու նեոդասական զարգացումներում, կատարելով եզրակացություններ ու ընդհանրացումներ: Այստեղ իսկ նա անդրադառնում է դրամավարկային քաղաքականության և գնաճի կարգավորման երկու հիմնական ուղղությունների՝ քեյնսականության և մոնետարիզմի վերլուծությանը: Մեկի և մյուսի ճշմարտությունը և սխալը հաստատող աքսիոմատիկ պատասխաններ չկան:

Ես այն կարծիքին եմ, որ Քեյնսի ուսմունքում ավելի շատ տեսություն կա, իսկ տեսության մեջ ավելի շատ ուսմունք: Մոնետարիզմը չունի քեյնսականության հստակությունը, բայց ուժեղ է հիպոթեզների փորձարարական ստուգաբանությամբ: Սակայն գրականության մեջ հաճախ այդ երկու ուսմունքների միջև հակասություններ են փնտրում: Քեյնսը մի առիթով նկատել է, թե «մենք բոլորս սովորել ենք այն բանին, որ մերթ հայտնվում ենք լուսնի մի կողմում, մերթ մյուս, պատկերացում չունենալով այն մասին, թե որ ճանապարհն է միացնում այդ երկու կողմերին»¹: Եվ այս իմաստով Ա. Պետրոսյանի մտածական պահվածքը բնորոշվում է մի առանձնահատկությամբ ևս. տնտեսական ուսմունքների էվոլյուցիայի մեջ տեսնել ոչ միայն դրանց բաժանող, այլև դրանց միացնող տիրույթները: Տվյալ դեպքում՝ քեյնսականության և մոնետարիզմի:

Առաջադրելով լրացումներ ինչպես փողի պահանջարկի քեյնսյան, այնպես էլ Ֆրիդմենի մոդելներում, ՀՀ ներկա փուլի համար առավել կիրառելի է դիտվում քեյնսյան դրույթները (ինչի մասին վկայում է այն, որ 2006թ. կենտրոնական բանկը գնաճի նպատակադրման հետ կապված փողի ագրեգատների նպատակադրումից անցավ տոկոսադրույթի նպատակադրման քաղաքականությանը), որը դեռևս պետք է զուգորդվի փողի ագրեգատների նպատակադրման մոնետարիստական ռազմավարությանը:

Հարցերի հաջորդ խումբը վերաբերում է գնաճի նպատակադրման միջազգային փորձի, մասնավորապես տնտեսապես զարգացած երկրների և զարգացող ու անցումային երկրների վերլուծությանը: Այստեղ իսկ հեղինակը, ի տարբերություն գրականության մեջ տեղ գտած բնորոշումների, տալիս է «նպատակադրում» հասկացության մի ավելի տարողունակ բնորոշում, որն իր ընդհանուր ձևակերպման մեջ ճիշտ է, սակայն որքանով նպատակադրումը կարող է

¹ Браунинг Питер, Современные экономические теории: буржуазные концепции, М., 1984, с. 144.

վերաբերել այս կամ այն խնդրին, ուստի յուրաքանչյուր անգամ կպահանջվի տնտեսական քաղաքականության գործիքների հստակեցում՝ նպատակային փոփոխականի քանակական կողմնորոշիչներին հասնելու համար¹:

Առանձնացնելով գնաճի նպատակադրման կիրառման երեք պատճառներ, կապված արժույթային ճգնաժամի, կայունացնող քաղաքականության էվոլյուցիան ամրագրված փոխարժեքի հիմքի վրա, փողի ազդեցատների նպատակադրման արդյունավետության կորուստը և հաշվի առնելով կոնկրետ երկրների առանձնահատկությունների աշխարհագրությունը, գտնում է, թե ամբողջությամբ չի կարելի «հաստատել զարգացող և անցումային տնտեսությամբ երկրների պատրաստվածությունը՝ ներդնելու գնաճի նպատակադրումը»:

Իրավացի է հեղինակի այն նկատումը, թե ՀՀ դրամավարկային քաղաքականության բնագավառում դժվար է միանշանակ որոշել, թե դրամավարկային ազդակները փոխանցման ինչ ուղիով են ներգործում տնտեսության վրա, կապված եկամուտների անհավասարաչափ բաշխվածության, արտաքին ֆինանսավորման աղբյուրների, արտարժույթային ներհոսքի և այլ երևույթների հետ: Փաստական վիճակագրական տվյալների՝ ՀՆԱ-ի, գործազրկության, պետական բյուջեի եկամուտների, փողի զանգվածի և այլ ցուցանիշների վերլուծության արդյունքում առաջարկվել է գնաճի նպատակադրման ռազմավարության հնարավոր բնութագրիչները և կառավարման որոշակի քայլերը:

Հետազոտության մեջ առկա է բանավեճ, ոչ թե հին-նոր տեսակետների հակադրման, այլ երևույթների ճանաչողության ժամանակ դրանց համադրման սկզբունքով: Երիտասարդ տնտեսագետի կողմից կատարված է շրջահայաց, հարցերը գիտական ու հիմնավոր փաստարկներով գրված աշխատություն:

5

Հայտնի տնտեսագետ Ավետիք Արասխանյանը 1879 թվականին գրված հոդվածներից մեկում Արևմտյան Եվրոպայի տնտեսական ու մշակութային կյանքը դիտում է որպես խորհրդանիշ, երկրամասի կատարելագործման լավագույն օրինակ՝ ազգային առաջադիմությանը ընթացք տալու համար: Հատկապես նպատակ ունենալով հայ հասարակական հանրությանը ծանոթացնելու «Եվրոպայի նյութական հարստություններ»-ին նա նկատում է թե՛ «Մենք ետ մնացած ազգ ենք, աչքներս նոր բացված, մենք զգում ենք և պարզապես տեսնում թե ինչ մութ խավարի մեջ ենք, թե ինչ թանձր մթնոլորտի մեջ ճնշված և խեղդված ենք: Դարևոր այդ քնից մեզ զարթնեցնելու համար հարկավոր էր մի ուժ, մի գորավոր ճառագայթ, մի մեծ զարկ և այդպիսին ներկայացավ, դա այժմիս Եվրոպան է իր քաղաքակրթությամբ: ... Մենք մի ազգային օգուտ ունենք այդ բոլորի հետ ծանոթանալ, որպեսզի համեմատական մեթոդով կարողանանք մեզ ինքներս լավ ճանաչել, ուշադրություն դարձնել հայտնի բաների վրա և պատրաստել հաստատ հիմք մեր ապագա կյանքի համար»²: Խոսքը վերաբերում է նոր խորհուրդներ որոնելու անհրաժեշտությանը: Վ. Կյուլենսկին նկատում է, որ, եթե պատմությունն ընդունակ է ինչ-որ բան սովորեցնել, ապա ամենից առաջ՝ ինքն իրեն գիտակցելուն, ներկայի նկատմամբ պարզորոշ հայացքին³: Այնքան է խոսվել «Եվրոպական ոգու» համամարդկային նշանակության չափանիշների բացառիկության մասին, որ բոլորը, անկախ նրանց աշխարհագրական դիրքից, տնտեսական զարգացման մակարդակից, հասարակության պահվածքի բազմաթիվ այլևայլ նորմերից ձգտում են դառնալ Եվրամիության անդամ: Վերջինս առաջին հերթին տնտեսական միավորում է և բնական է, որ հայ տնտեսագիտական մտքի արդի հետազոտական շերտի մի նշանակալից հատվածը վերաբերում է տնտեսության արտաքին հատվածի այդ հիմնախնդիր-

¹ Տես՝ Արսեն Արամի Պետրոսյան, Գնաճի նպատակադրման ռազմավարության տեսական հիմքերը (ՀՀ օրինակով) փնկնածության ատենախոսության սեղմագիրը, Ե., 2008, էջ 9:

² «Մշակ», 1879, N 85:

³ Տես՝ Философия истории, М., 1999, с. 24.

ներին: Բռննի համալսարանի փիլիսոփայության պրոֆեսոր Ս. Պոգորելսկայան անդրադառնալով հեռուստատեսային հաղորդումներից մեկի ժամանակ ուկրաինական մարմնագույն հեղափոխության մասնակիցների այն ոգևորությանը, թե Ուկրաինան շուտով կդառնա Եվրամիության անդամ, վկայակոչում է հաղորդավարի գործընկերներից մեկի այն նկատումը թե «Բայց չէ որ մենք նրանց առանց այդ էլ օգնում ենք, և դեռ էլի պիտի օրենք ... միթե չի կարելի այնպես անել, որպեսզի նրանք մեզ մոտ չգան»¹:

Վերջին երկու տասնամյակների ընթացքում՝ կապված Եվրամիության ընդլայնման հետ «հին Եվրոպայի» քաղաքացիների և եվրոնտրոյալների միջև ճեղքվածքը անչափ մեծացել է: Հասարակության մեջ ամեն ինչ ենթակա է չափորոշման, ինչպես ասում են՝ ձգտում է նկատվում եվրոպական կյանքը իր բոլոր մանրամասների մեջ ենթարկել կարգավորման, ընդհուպ մինչև խանութներում վաճառվող վարունգի չափերը²: Այսպիսի պայմաններում սկզբունքային իմաստ է ստանում զարգացող երկրների տնտեսական մակարդակների, ազգային ավանդների ու եվրոպական երկրների մակարդակների ու ավանդների հարաբերակցության հարցը Եվրամիությանը անդամակցելու փոխարեն, առաջադրելով նրա հետ հարևանության հարթությունը, ցուցադրելով եվրոպական արժեքների միանշանակության հայացքի պատրանքայնությունը: Այնուամենայնիվ, անցած ժամանակամիջոցում Եվրամիության և Հայաստանի Հանրապետության միջև ուրվագծվել է առևտրատնտեսական կապերի որոշակի պատմություն, որին անդրադառնում է Թ. Թորոսյանը, առաջարկելով այդ կապերի հետագա խթանման որոշակի միջոցառումներ.

- «պետական ակտիվ քաղաքականության իրականացում, որն ուղղված կլինի Հայաստանի և հայ արտադրողի ճանաչմանը Եվրամիության շուկայում,
- պետական քաղաքականություն՝ ուղղված արտադրանքի որակի բարձրացմանը՝ համապատասխանեցնելով այն միջազգային ստանդարտներին և ԵՄ շուկայի պահանջներին,
- մաքսային և հարկային համակարգերում բարեփոխումների իրականացում,
- ներդրումների ներգրավմանն ուղղված խթանման քաղաքականության իրականացում,
- ԵՄ շուկայի մասին տեղեկատվության մատչելիության բարձրացում,
- առևտրային խոչընդոտների մեղմացում,
- բեռնափոխադրման ոլորտում մրցակցության առկայություն»³:

Հեղինակը նշում է նաև բազմաթիվ այլ պայմանականություններ, եզրակացնելով, որ. «Ինչ վերաբերում է ՀՀ ԵՄ անդամակցության խնդրին, ապա, մեր կարծիքով, եթե Հայաստանի Հանրապետության տարեկան միջին աճի տեմպերը պահպանեն իրենց երկնիշ բնույթը, ապա համախառն ազգային արտադրանքի 1 շնչին ընկնող ցուցանիշով Հայաստանը կարող է հասնել ԵՄ միջին մակարդակին, իսկ դա նշանակում է, որ հեռանկարում Հայաստանը կարող է հավակնել ԵՄ անդամակցությանը»⁴:

Գոյություն ունի մի ճշմարտություն, երբ առաջադրվում է հարցը, ապա սկսում է գործել «տրամաբանության քնահաճույքը» և լուծումը տեսնելու որոշակի կնճիռների վերացման հետ, որոնք իրենց գործնական լուծումներում այնքան երկար ժամանակ են պահանջում, որ միանգամայն օրինաչափ են դարձնում մոռ կնճիռների ի հայտ գալը և մորից հեռացում խնդրի լուծումը: Ինձ թվում է ԵՄ անդամակցությունը ենթակա է հենց այդ տրամաբանությանը:

Եթե Կ. Առաքելյանը անդրադառնալով Հայաստանի տարածաշրջանային պահվածքին, ելքը տեսնում է «կոմպլեմենտարության» սկզբունքում, փորձելով դուրս չնմալ տարածաշրջանային զարգացման ծրագրերից⁵, իսկ Գ. Հայրապետյանը կարևորում է հանրապետությունում արդյունավետ մրցակցային քաղաքականության ընդունման և կիրառման հիմնախնդրի լուծումը

¹ Литературная газета, 2005, N 32.

² Նույն տեղում:

³ Տե՛ս Սոցիալ-տնտեսական արդի հիմնախնդիրները ՀՀ-ում (գիտաժողովի նյութեր), Ե., 2007, էջ 400:

⁴ Նույն տեղում, էջ 401:

⁵ Նույն տեղում, էջ 404-408:

(որպես ազգային մրցակցային օրենքի)¹, ապա Ն. Հովհաննիսյանին հետաքրքրում է արտահանման խթանման միջազգային փորձի ինչ-ինչ տարրերի կիրառումը հանրապետությունում²:

Ա. Մարկոսյանը ուշադրություն է սևեռում մի ուշագրավ հանգամանքի՝ զուտ արտահանման վրա, որպես երկրի զարգացման որակական ցուցանիշի: Տնտեսագետը իր ասելիքը իրացնում է տեսականի ու վերլուծականի միասնության մեջ: Նա համոզում է այն հետևությանը, որ գլոբալացման ու տնտեսական ինտեգրացման պայմաններում արտահանման աճը արտադրության աճի համեմատ ստացել է առաջանցիկ նշանակություն, իսկ այն երկրները որոնցում գրանցվում է զուտ արտահանության հարաբերական առավելություն, վկայում են տվյալ երկրի տնտեսության կառավարման արդյունավետության, համաշխարհային շուկային նրա ինտեգրացման աստիճանի, երկրի տեխնոլոգիական մակարդակի ու մրցունակության մակարդակների համատեղության մասին³:

* * *

Տնտեսական զարգացումը միշտ ուղեկցվել է նոր իմաստավորումներով՝ ի հայտ բերելով տնտեսական մտածողության բարդությունը: Իր էվոլյուցիայի մեջ, տնտեսագիտական մտքի ուղղությունները փորձել են երևութները դիտարկել նորանոր կապերի մեջ: Դրանում իրենց արտահայտությունն են գտել նաև միջազգային առևտրի հարցերը, ձև տալով հայացքների այս կամ այն համակարգին: Երիտասարդ տնտեսագետ Գ. Հարությունյանը արտաքին առևտրում երկրների տնտեսական առավելություններն ակնկալող հիմնական տեսությունները ընդհանրացնում է «համեմատական առավելությունների տեսության» մի տարրողունակ հասկացության մեջ, ուր Դ. Ռիկարդոյի համանուն տեսությունը դրա մի տարբերակն է, որպես հարաբերական ծախսերի տեսություն: Իրավացի է հեղինակի այն նկատումը, թե տնտեսագիտական միտքը աստիճանաբար իր վերանայումների մեջ ազատվեց մերկանտիլիզմի մասին միակողմանի ու հետահայաց սահմանափակ բնութագրություններից, նրանում հայտնաբերելով այսօրվա կենսունակություն ցուցադրող սկզբունքներ: Ջ.Մ. Զեյնսը, խոսելով վաղ մերկանտիլիստական տեսությունների մասին, հենց այս իմաստով է նկատում, «թե ... մենք դաստիարակվել ենք այն համոզվածության մեջ, որ դրանք իրենցից ներկայացնում էին զրեթե ամբողջովին անմտություններ»: Մինչդեռ փողի առատության և ցածր տոկոսադրույքի, ներդրումների ու զբաղվածության վրա ունեցած խթանիչ ազդեցության նրանց նկրտումներում հարկ է տեսնել «գիտական ճշմարտության տարրեր»⁴:

Երբ խոսք է գնում համեմատական առավելությունների մասին, հաճախ նկատի է առնվում Դ. Ռիկարդոյի տեսությունը: Գ. Հարությունյանի հայեցությամբ, համեմատական առավելությունը տարրողունակ հասկացություն է, որը կարծես արտաքին տնտեսական հատվածի համար դարձել է հավերժական խնդիր, տարբեր տեսությունների առումով իր զարգացման ընթացքի մեջ բերելով խտացումների և նոր սահմանների: Եվ այսպես, «Տնտեսագիտական միտքը, ընդհանրացնում է հեղինակը, բազմիցս փորձել է ճշգրտել համեմատական առավելություններ հասկացության սահմանները՝ միջազգային առևտրի զարգացման և բարդացման հետ դրանում հայտնաբերելով նոր բաղադրիչներ, հավակնելով որպես նոր տեսություններ: Համեմատական առավելությունների առաջին պարզ մեկնաբանությունը հիմնվում էր ապրանքների արտադրության ծախսերի բացարձակ տարբերության վրա (Ա. Սմիթ), այնուհետև՝ հարաբերական ծախսերի տարբերության վրա (Դ. Ռիկարդո): Վերջինի զարգացման արդյունքում, ավելի ուշ, առաջարկվում է այլընտրանքային ծախսերի սկզբունքը, ըստ որի՝ համեմա-

¹ Նույն տեղում, էջ 434-438:

² Նույն տեղում, էջ 443-448:

³ Նույն տեղում, էջ 462:

⁴ См. Антология экономической классики, Т. Мальтус, Дж. Кейнс, Ю. Ларин, М., 1993, с. 395.

տական առավելությունները որոշելու համար հիմք էր ընդունվում այն ապրանքի արտադրության ծավալը, որից պետք էր հրաժարվել՝ մեկ այլ ապրանքի արտադրությունը մեծացնելու համար (Գ. Հաբերլեր): Մեկ այլ մոտեցման համաձայն՝ համեմատական առավելությունների գնահատման հիմքում արտադրության գործոններով երկրների ապահովվածության հասկացությունն է (Է. Հեբշեր և Բ. Օհլին): Միջազգային առևտրի վրա ԳՏԱ ազդեցության աճին զուգահեռ ձևավորված նոր բնորոշումները հիմնվում էին երկրների միջև առկա տեխնոլոգիական խզվածքի (Մ. Պոզներ) և ապրանքի կենսացիկլի (Բ. Վերմոն, Չ. Կինգելբերգեր) վրա: Իսկ համաշխարհային տնտեսության զարգացման արդի փուլում, երբ մրցակցությունը երկրների և առանձին ձեռնարկությունների միջև առավել լարված բնույթ է կրում, առաջ է քաշվում համաշխարհային շուկայում երկրների հաջողության նոր հանձնարարական՝ արտաքին առևտուրը կառուցել մրցակցային առավելությունների սկզբունքով (Մ. Պորտեր)»¹: Իմ նպատակից դուրս է մեկ առ մեկ անդրադառնալ վերը նշված տեսությունների հեղինակի քննությանը: Այն կարևորում են որպես տրամաբանական վերլուծության մի փորձ, որը կատարվում է Հայաստանի արդի կացության և արդի հայ տնտեսագիտական մտքի արժարժույթների առնչություններում: Հեղինակը բնավ այն կարծիքին չէ, թե հանրապետության արտաքին կապերի պահվածքը անհրաժեշտ է ձևել այս կամ այն տեսության վրա:

1990թ. լույս է տեսնում Հարվարդի բիզնեսի դպրոցի պրոֆեսոր Մայքլ Պորտերի «Ազգերի մրցակցային առավելությունները» մենագրությունը: Նա, նշելով այլևայլ պայմանականություններ, առանձնացնում է չորսը՝ արտադրության գործոնների, ներքին պահանջարկի, հարակից և սպասարկող ճյուղերի, ֆիրմայի ռազմավարության, կառուցվածքի և ներճյուղային մրցակցության ցուցանիշները, որոնք պայմանավորում են երկրի հաջողությունը միջազգային մրցակցության մեջ: Ինչ խոսք, Պորտերի աշխատության ընդգրկումները լայն են, սակայն, ինչպես նկատում է Գ. Հարությունյանը, իրականում «մրցակցային առավելության տեսությունը դասական գաղափարների վերինաստիճանյան յուրօրինակ փորձ է՝ հիմնված տնտեսագիտական մտքի նոր ձեռքբերումների և արդիականության բացահայտած նոր իրողությունների վրա»²: Այնուամենայնիվ, Պորտերի տեսությունը նույնպես անխոցելի չէ, ինչպես օրինակ ներքին մրցակցության կարևորմանը կամ արժույթային փոխարժեքների փոփոխությանը երկրորդային ֆունկցիա վերագրելուն: Ավելին, «Ի վերջո, - նկատում է Գ. Հարությունյանը, - ապրանքի իրացման «վերջին խոսքը» պատկանում է համաշխարհային շուկային, որը կարող է մաս չընդունել այն ապրանքները, որոնք արտադրվել են մրցակցային առավելությամբ: Արտաքին շուկայի «տրամադրվածությունը» պայմանավորող որոշ գործոններ (ճաշակներ, վարկանիշ և մրցակցային ռազմավարություն և այլն) Պորտերի կողմից աչքաթող են արվել: Տեսության հիմքում համեմատական վերլուծությունների բացակայությունն, ակամայից, անտեսում է արտաքին շուկայի հետ հետադարձ կապի գոյությունը, որն ապահովում է վճարային հաշվեկշռի հավասարակշռվածություն. այն է՝ ապրանքների արտահանումը միշտ էլ նախապայման է ներմուծման համար, և հակառակը»³:

Հագիվ թե հնարավոր է գտնել մի այնպիսի տեսություն, որի վրա հնարավոր է ձևել արտաքին տնտեսական քաղաքականությունը: Առկա են ազգային տնտեսությունների բազմակի հակասություններ ու անհամաչափություններ, յուրօրինակ հանգամանքներ, որոնք պահանջում են կոնկրետ մոտեցումներ ու լուծումներ, հետևապես առավել իրատեսական և արդյունավետ իրագործելի բաղադրիչների ընտրություն: Հենց այս առումով էլ Գ. Հարությունյանն առաջադրում է ինտեգրալ համեմատական առավելություններ հասկացությունը, որի հիմքում «ուսումնասիրության պլյուրալիստական մեթոդն է, որը ենթադրում է երևույթների

¹ Հայաստան. ֆինանսներ և էկոնոմիկա, 2006, N 9 (73), էջ 111:

² Տես՝ Գ. Հարությունյան, «Համեմատական առավելության սկզբունքը և ՀՀ արտահանման կառուցվածքի բարելավման հնարավորությունները» թեկնածուականատենախոսության սեղմագիրը, Ե., 2008, էջ 10:

³ Տես նույն տեղում, էջ 36:

բազմատարբերակ գնահատումների հիման վրա ձևավորված ինտեգրալ հայացք»¹: Իսկ արտաքին առևտրում երկրի ինտեգրալ համեմատական առավելությունները ձևավորվող գործոններն են. աշխատուժն իր որակական հատկանիշով, արտադրության այլ գործոնների առկայությունը, հասունելիությունը և որակը, համաշխարհային շուկայում պահանջարկը, այլընտրանքային ծախսերը, ապրանքի կենսացիկլի առանձնահատկությունները, գների մակարդակը և փոխարժեքը, մրցակցության և այլ ինստիտուցիոնալ պայմանների առկայությունը: Բաղադրիչների այս շրջանակներում էլ փորձ է արվում իրականացնել ՀՀ տնտեսության ինտեգրալ համեմատական առավելությունների գնահատումը և նախանշել արտաքին առևտրի կառուցվածքի բարելավման հնարավոր ուղիները:

6

Ասում են կյանքի վերջին տարիներին ռուսական ցարի՝ Նիկոլայ առաջինի տարօրինակությունները ընդունել էին կլինիկական բնույթ: Մի անգամ նա գեներալ համհարզ Նազիմովին հարցնում է, թե «քեզ երբևէ առիթ եղել է կարդալու փիլիսոփայական աշխատություն»: Նազիմովը պատասխանեց բացասական: «Իսկ ես կարդացել եմ, — ասում է ցարը, — և համոզվեցի, որ դրանք բոլորը միայն մտքի մոլորություններ են»²:

Տնտեսագիտությունը սոցիալական գիտություններից միակն է, որի գծով սահմանված է նորեկյան մրցանակ: Առարկան դուրս է եկել արտադրության և բաշխման վերաբերյալ պատկերացումների նախկին սահմաններից: Ինչպես ասում է Հ. Բեքքերը «Ես հանգել եմ այն համոզման, որ տնտեսական մոտեցումը համընդհանուր է, այն կիրառելի է մարդու ցանկացած պահվածքի համար»³: Ուստի պատահական չէ, որ սոցիալական այնպիսի երևույթներ են դարձել տնտեսագիտության ուսումնասիրությունների առարկան, ինչպիսիք են՝ ընտրությունները, լոբիզմը, պատերազմները և հեղափոխությունները, կոռուptionը, հանցագործությունները, ամուսնությունները, ընտանիքի պլանավորումը, սեքսուալ ակտիվությունը, եղանակի փոփոխությունը, հաճախումները եկեղեցի, կախվածությունը թմրամիջոցներից և այլն: Իսկ Ա. Բլայնդերը «Առամները մաքրելու տնտեսագիտական տեսությունը» սրամիտ պարոդիայով հեզնում է տնտեսագետների իմպերիալիստական պահվածքը⁴: Դա վկայում է ոչ թե տնտեսագիտական մտքի մոլորությունների, ինչպես կասեր ռուսական ցարը, այլ այն մասին, որ մարդկային տնտեսական պահվածքի շարժառիթների գիտական իմացությունը ենթադրում է ավելի հիմնավոր բացատրություններ, քան կատարվել է նախորդ ժամանակներում:

Ընդհանրապես տնտեսագիտական մտքի դիմամիկան փոխում է այս կամ այն երևույթի կամ կատեգորիայի վերաբերյալ պատկերացումները, ընդլայնում կամ վերագնահատում դրանք: Այսպես օրինակ՝ առաջին արժարժումներից հետո պահանջվեց շուրջ երեք հարյուր տարի մինչև XX հարյուրամյակի կեսերին կձևավորվեր մարդկային կապիտալի վերաբերյալ տեսությունը, որին առանձնահատուկ տեղ է հատկացվում վերջին տասնամյակներին: Չեն ուզում անդրադառնալ այդ հետազոծին և այն պայմանավորող տնտեսական պայմաններին, ինչը արված է մասնագիտական գրականության մեջ: Նկատենք, որ կուտակված է հսկայական գրականություն, ձևավորվել է որոշակի հետազոտական ոլորտ, որտեղ փորձ է արվում մարդկային կապիտալի բնութագրերի մեջ խնդիրը լուսաբանել տարբեր կապակցություններում: «Տեսության այդ էվոլյուցիան, — նկատում են Բ. Եդիազարյանը, Ա. Գյուրջյանը և Ն. Եդիազարյանը, — անխուսափելիորեն բերել է տնտեսության զարգացման այժմյան պարադիգմի ձևավորմանը, որի հիմքում գիտելիքի գերակայությունը հավաստող դրույթ է: Այն ելնում է գիտելիքի վրա հիմնած տնտեսության գաղափարից և պայմանավորում է այդպիսին ձևավորելու նպատակին ուղղված

¹ Նույն տեղում, էջ 38:

² Наука и жизнь, 2006, N 7, с. 58.

³ Н. И. Титова, *ibid.*, էջ 241:

⁴ История экономических учений (под ред. В. Автоматова и др.), М., 2003, с. 720.

գործողությունների մշակման և իրականացման անհրաժեշտությունը: Եվ, քանի որ գիտելիք ստեղծողը, կրողը և կիրառողը մարդն է, ապա մարդու մոտ գիտակցված գործելու կարողության ձևավորումն ու արդյունավետ օգտագործումը դառնում են տնտեսության և հասարակության զարգացման, հետևաբար նաև տնտեսագիտության և սոցիալական գիտությունների հետազոտությունների առաջնային ուղղություններ»¹: Վկայակոչումներ կատարելով տարբեր հեղինակներից, այնուհետև նրանք եզրակացնում են, թե Ա. Սմիթից (անգլիացի տնտեսագետի կարծիքով կապիտալը կոչված է եկամտի բերելու, իսկ հիմնական կապիտալը ներառում է մարդկային կապիտալը² – Ռ.Ս.) հետո, մի ամբողջ մեկուկես հարյուրամյակ տնտեսագիտական միտքը մոռացության է տվել «Մարդկային տարրի գոյությունը կապիտալում», դրանով իսկ «ինչպես տնտեսության, այնպես և ողջ հասարակության զարգացման գործում դրա առաջնային դերը փաստորեն անտեսվեց, հիմնականը համարվեց նյութատեխնիկական (ֆիզիկական) կապիտալը»³: Սակայն հարկ է նկատել, որ հետագա հետազոտություններում ընդլայնվել են կապիտալի հասկացության ու կառուցվածքի սահմանները ու տնտեսական զարգացման մեջ մարդկային տարրի՝ իրենց հարցադրումներով տնտեսագիտական միտքը մղել նոր ուսումնասիրությունների ապագայում: Այսպես.

- Ֆրանսիացի Ժան Բատիստ Սեյը որպես ապրանքի գնի երեք տարրերի՝ հողի, աշխատանքի և կապիտալի «համատեղ գործողության» քննարկումը իրենց փոխադարձ կապի և փոխադարձ պայմանավորվածության մեջ, կարևոր դեր է խաղացել՝ ապագա տնտեսագիտությանն առաջադրելով տնտեսական արդյունավետության խնդիրը, որպես արտադրության գործոնների օպտիմալ գոգորդումների հետևանք: Ավելին՝ նա առաջադրել է նաև տնտեսական ռեսուրսների չորրորդ տարրը՝ ձեռնարկատիրական ունակությունը: Ձեռնարկատիրոջ շահույթը նա բաժանում է երկու մասի, մի մասը որպես «վարձատրություն նրա արդյունաբերական ընդունակությունների համար, նրա տաղանդի, գործունեության, կարգ ու կանոնի և ղեկավարության ոգու համար», իսկ մյուսը՝ «կապիտալի արտադրողական ծառայությունների համար»⁴:
- Գերմանացի Ֆրիդրիխ Լիստը քննադատում էր Ա. Սմիթի արտադրողական աշխատանքի տեսությունը, որը կառուցված էր կոպիտ նյութապաշտական սկզբունքի վրա և անտեսում էր ազգի տնտեսական զարգացման «ինտելեկտուալ և սոցիալական ուժերը», ավելին, որ «ազգը պետք է կարողանա զոհաբերել և հաշտվել նյութական հարստության պակասի հետ», որպեսզի զարգացնի «հարստություն ստեղծելու ունակությունը»⁵:
- Կ. Մարքսը, մարժինալիզմի ներկայացուցիչները (Ե. Բեմ-Բավերկը, Ֆ. Վիգերը, Կ. Մենգերը, Կ. Վիքսելը) կապիտալի կառուցվածքի և բնութագրումների առումներով սահմանել են նոր սկզբունքներ, իսկ կապիտալի սուբյեկտիվ տեսության հիմնադիր Ի. Ֆիշերի այն դրույթը՝ թե կապիտալը պաշար է, որը ծնում է կապիտալի ծառայություն և որը փոխարկվում է եկամտի, ինչպես նկատում է Վ. Սուրպրունը, կարելի է բավականին հիմնավոր ձևով բացատրել ժամանակակից տնտեսական գործընթացները, ինչպիսիք օրինակ արտադրության գործընթացում ինտելեկտուալ կապիտալի դերի աճը⁶:

XX դարը կապիտալի սահմանումների առումով անհամեմատ հարուստ է: Գ. Բեքքերի, Տ. Շուլցի, Հ. Բոուենի, Գ. Մենքյուի, Ջ. Գոոթնի, Մ. Արմսթրոնգի, Ն. Բոնթիսի, Թ. Դեվենփորթի, Լ. Գայգերի և ուրիշների բնորոշումների համեմատական վերլուծության արդյունքում Բ. Եդիսզյանը, Ա. Գյուրջյանը և Ն. Եդիսզյանը տալիս են կապիտալի մասնակի դեպքի՝

¹ Բ. Եդիսզյան, Ա. Գյուրջյան, Ն. Եդիսզյան, նշվ. աշխ., էջ 144:

² А. Смит., Исследование о природе и причинах богатства народов, М., 1962, с. 206.

³ Բ. Եդիսզյան, Ա. Գյուրջյան, Ն. Եդիսզյան, նշվ. աշխ., էջ 144:

⁴ Жан Батист Сэ., Трактат политической экономии, М., 1896, с. 58.

⁵ Лист Ф., Национальная система политической экономии, СПб., 1891, с. 184.

⁶ В. А. Сурпун, Интеллектуальный капитал, М., 2006, с. 24.

մարդկային կապիտալի հասկացության հետևյալ ընդհանրական սահմանումը. «Մարդկային կապիտալը մարդ-անհատի կամ մարդկանց որոշակի խմբի այն հնարավորությունների (կարողությունների) հանրագումարն է, որոնք առանձին-առանձին կամ դրանց որևէ համալիրի ձևով կարող են կիրառվել բազմակի անգամ՝ յուրաքանչյուրում ապահովելով պահանջմունք բավարարող արդյունք կամ օժանդակելով այդպիսի արդյունքի ստացմանը»¹:

Սահմանագատելով մարդկային կապիտալի հետ ունեցած մարդկային ռեսուրս, կադրային ռեսուրս, կադրային կապիտալ, մարդկային ներուժ, մարդկային զարգացում հասկացությունները, տեղին են գտնում վերը նշված հեղինակների քննարկած հարցերի մասին ավելի էություն պատկերացում կազմելու համար պարզապես վկայակոչել աշխատության ցանկը. մարդկային կապիտալի տնտեսագիտական էությունն ու սահմանումը, համակարգային բնութագրման հիմնադրույթներն ու մեթոդական մոտեցումը, բնութագրիչ առանձնահատկությունները, հասարակական էությունը, մարդկային կապիտալի և գիտակցված գործելու կարողության ձևավորումը, մարդկային կապիտալի լիարժեք օգտագործումը՝ հասարակության զարգացման կարևորագույն գործոն, մարդկային զարգացման հասկացությունը, բնութագրերը, գնահատումը և այլն: Դիշտ է ասված, թե մտայնությունը շարժող ուժ ունի, և վերը նշված հարցերն իրենց «հիերարխիկ տրոհման և մանրամասնեցման» մեջ վկայում են հեղինակների վերլուծական նախասիրությունների մասին:

Մարդկային կապիտալի վերաբերյալ կատարվող համակողմանի ուսումնասիրությունների քանակական աճի հետ տեղի են ունենում տնտեսագիտական մտքի խորացումներ: Գիտնականները մարդկային կապիտալի հիմնահարցը առնչում են երևույթների տարբեր տեսանկյունների հետ, ինչը կարող է հնարավորություն տալ հասկանալու արդի տնտեսական փոխակերպությունները: Այդ տեսանկյուններից է մտավոր կապիտալի խնդիրը, որի վերաբերյալ տնտեսագիտական միտքը առաջադրում է երկու տեսակետներ՝ մի դեպքում այն համարելով մարդկային կապիտալի մի մասը, մի այլ դեպքում՝ թե մտավոր կապիտալը մարդկային կապիտալի համեմատությամբ ավելի լայն և բարդ հասկացություն է և իր մեջ ներառում է տեղեկատվությունը որպես ինքնուրույն արտադրական ռեսուրս: Այդ գործոնների տնտեսական արդյունավետության որոշումը կապված է դժվարությունների հետ, որոնք «հաճախ համընկնում կամ փոխարինում են միմյանց»: Իսկ դա արդեն, ինչպես նկատում է Հ. Գալստյանը, ենթադրում է նոր վերլուծական աշխատանքների, դրանք հատկանշող նոր բանաձևերի որոնման պահանջը: Հենց այս իմաստով էլ կարևորվում է այդ երկու կատեգորիաների քննարկման անհրաժեշտությունը տարբեր մակարդակներում, դրանց փոխհարաբերությունները մյուս ռեսուրսների հետ: Նա մտավոր և մարդկային կապիտալների առանձնահատկությունները դիտարկում է միկրո և մակրո մակարդակներում, փորձելով ցույց տալ դրանց միացնող և բաժանող տիրույթները²: Անդրադառնալով մտավոր կապիտալի՝ որպես տեղեկատվության, գիտելիքների և աշխատանքային փորձի իրացման ձևի, սեփականության առանձնահատկությունների հարցերին, Հ. Գալստյանը քննության առարկա է դարձնում մտավոր կապիտալի վերարտադրության հիմնախնդիրները, այս համատեքստում էլ անդրադառնում հանրապետության այս բնագավառի գնահատումներին: Հեղինակի ուսումնասիրության մեջ հարցերի դրվածքն ու ընդհանուր ուղղությունը համահունչ է արդի տնտեսագիտական մտքի ընդհանուր բովանդակությանը, ելակետ ունենալով այն, որ մտավոր կապիտալը դարձել է ազգային տնտեսության զարգացումը պայմանավորող հիմնարար գործոնը: Մտավոր կապիտալի թեմատիկան նոր է հայ տնտեսագիտության մեջ: Կապված վերարտադրության գործընթացում նրա գնահատումների հետ, շատ հարցեր մնում են չբացահայտված: Նյութի գիտական մշակումը, հարցերի իմաստավորումը պահանջում են նոր ուսումնասիրություններ, հատկապես տեսական կտրվածքի

¹ Բ. Եղիազարյան, Ա. Գյուրջյան, Ն. Եղիազարյան, նշվ. աշխ., էջ 163:

² Տե՛ս Գ.Ա.Ա. Լրաբեր հասարակական գիտությունների, 2007, N 2, էջ 186-193:

առումով: Պիտեր Ֆ. Դրուքերը ոչ պակաս կարևորություն է հատկացնում գիտելիքների այն բնագավառներին, որոնք գտնվում են այլ սահմաններից դուրս, ինչը ավանդաբար անվանվում է «գիտություն»: XX դարի նոր տեխնոլոգիաները հաղթահարում են «նյութական աշխարհի և բանականության աշխարհի միջև այն սահմանը, որը ներդրեց արևմտյան մտածողության մեջ Դեկարտը երեք հարյուր տարի առաջ»: Առաջադրված հարցը առանձնահատուկ իմաստ է ստանում մի հարթության մեջ, որտեղ «երկու կուլտուրաների»՝ բնագիտական և հասարակագիտական աշխարհների միջև ճեղքվածքը այլևս անթույլատրելի է: «Այն փաստը, – գրում է Դրուքերը, – որ նոր տեխնոլոգիաները հիմնված են ոչ միայն լոկ գիտության վրա, այլ նոր գիտելիքների վրա իր ամբողջ բազմակողմանիությամբ, նշանակում է նաև, որ տեխնոլոգիան այլևս չի առանձնանում կուլտուրայից և դառնում է նրա անբաժան մասը:

Ոչ պակաս կարևոր է, ոչ պակաս նոր է այն փաստը, որ նոր ճյուղերից յուրաքանչյուրը հիմնվում է գոտ գիտելիքի վրա: Դրանցից ոչ մեկը հիմնված չէ փորձի վրա: ... Մինչև 1850 թվականը բոլոր տեխնոլոգիաները, հետևապես նաև արտադրության բոլոր ճյուղերը հիմնված էին փորձի վրա: Գիտելիքները՝ համակարգված, նպատակաուղղված և կազմակերպված տեղեկատվությունը, դրա հետ գրեթե կապ չունեին: Նույնիսկ, այսպես կոչված, «ժամանակակից ճյուղերը», որոնք ի հայտ են եկել XIX դարի երկրորդ կեսին, և որոնց վրա մինչ այժմ կանգնած են մեր տեսությունները և արտադրությունը, եղել են կառուցված գերազանցապես փորձի, այլ ոչ թե գիտելիքների վրա:

... Այսպիսով, նոր ճյուղերը մարմնավորում են նոր տնտեսական իրողություն՝ գիտելիքները դարձել են կենտրոնական տնտեսական ռեսուրս:

... Եվ վերջապես, նոր ճյուղերը տարբերվում են «ժամանակակից» արդյունաբերության ավանդական ճյուղերից նրանով, որ դրանք ստեղծում են աշխատատեղեր գերազանցապես մտավոր, այլ ոչ թե ֆիզիկական աշխատանքի համար»¹:

Մտավոր կապիտալի տեսությունը ձևավորվել է ժամանակակից գիտական մտքի երկու հիմնական ուղղությունների՝ մարդկային կապիտալի և հետինդուստրիալ հասարակության տեսությունների վրա: Այսօր ՀՀ տնտեսությունը, նկատի ունենալով, որ Հ. Գալստյանը, չի կայացել որպես զարգացած արդյունաբերական համակարգ: Իսկ հիմնարար հետազոտությունները միշտ հնարավոր են նյութական արտադրության ամուր հիմքի, ժամանակակից կառուցվածքային տեղաշարժերի պայմաններում: Զարգացած երկրների և ՀՀ տնտեսության մակարդակների անհամաչափությունը բնավ չի նշանակում, թե մեզ համար դեռևս չի հասել մտավոր կապիտալի վերլուծության ժամանակը:

Խախտվել է մտավոր կապիտալի վերարտադրության գործընթացը հանրապետությունում: Իր պատճառների մեջ դա հանգում է հետևյալին. (ա) պետությունից համապատասխան ծախսումների փոքր ծավալով, որն ունակ չէ ապահովել մտավոր կապիտալի արդյունավետ վերարտադրությունը, բ) մտավոր կապիտալի վարձատրման անարդյունավետ համակարգով, տնտեսական և ոչ նյութական լուրջ խթանների համակարգի բացակայությամբ, գ) ձեռնարկատիրական ոլորտի զարգացման ցածր մակարդակով: Զարգացած երկրներում ձեռնարկատիրական դաշտը վերածվում է մտավոր կապիտալի կիրառման և գիտական հետազոտությունների ֆինանսավորման նախաձեռնողի»²:

¹ Питер Ф. Друкер, Эпоха разрыва. Ориентеры для нашего меняющегося общества, М., 2007, с. 43.

² Հ. Գալստյան, Մտավոր կապիտալի ձևավորման առանձնահատկությունները և վերարտադրության հիմնախնդիրները (առնախառնության սեղմագիրը), Ե., 2008, էջ 24:

Պ. Դրուբերի «Эпоха разрыва: ориентиры для нашего меняющегося общества» աշխատության վերնագիրը շատ խոսում և ստույգ է արտահայտում մեր դարաշրջանի առանձնահատկությունը: Նրանում հեղինակը անդրադառնալով տնտեսական ու սոցիալական գլոբալ փոփոխություններին, քննության առարկա է դարձրել չորս հիմնական ուղղություններ. նոր տեխնոլոգիաների ու արդյունաբերության ճյուղերի ի հայտ գալը, անցումը միջազգային տնտեսությունից համաշխարհային տնտեսությանը, կազմակերպությունների հասարակության հաստատումը և գիտելիքների կարևորության ուժեղացումը՝ որպես սոցիալ-տնտեսական զարգացման շարժիչ ուժի: Սակայն, ինչպես նկատում է Վ. Սադովնիչին, «գիտությունը, մարդուն զայթակղելով ամենագործության պատրանքով, նրան բերել է օտարմանը բնությունից, ինքն իրենից և իր նմաններից»¹:

Գտնվում ենք անջատման (խզման) դարաշրջանում, որը հասարակական պահվածքի համար գծում է նոր չափումներ՝ հաճախ անհասկանալի, իսկ բացատրությունների մեջ՝ անբանաձևելի: Գլխավոր հարցը «ոչ թե նրանում է, թե ինչպիսին է լինելու մարդկության ապագան, այլ թե լինելու է ընդհանրապես»²: Սա գլոբալացվող աշխարհն է:

7

Գլոբալացվող աշխարհի արդի տնտեսական միտումներին է անդրադառնում Թ. Մանասերյանը: Արտասահմանյան բազմաթիվ հեղինակներից կատարված վակայակոչումները, ինչը խոսում է խնդրի նրա լավատեղյակության մասին, իր դիտողությունների և եզրակացությունների մեջ հանգում է այն ընդհանրացմանը, թե «Այսպիսով, համաշխարհային տնտեսության արդի գլխավոր միտումներն են՝ տեղեկատվական տեխնոլոգիաների անընդհատ կատարելագործումը, որը թույլ է տալիս համադրել ընկերության աշխատանքները միջազգային մասշտաբով, միջազգային դրամական համակարգի հետագա ազատականացումը, որը հնարավորություն է ընձեռում օգտվել փոխարժեքների շարունակական տատանումներից, քաղաքական թշնամանքի, հակամարտության զգալի նվազումը, որը նոր շուկաներ մուտք գործելու և տնտեսական միություններ ձևավորելու լայն հնարավորություն է տալիս, Արևելքի և զարգացող, նորանկախ երկրների աճող դերը համաշխարհային տնտեսության ներսում և միջազգային կազմակերպություններում, որը տանում է դեպի ուժերի որոշակի վերաբաշխում, Արևելքի շուկաների որոշակի հզորացումը, որը նոր շուկա է ստեղծում և այն գրավիչ դարձնում ներդրումների համար, արտադրությունից դեպի ծառայությունների ոլորտի գերակայության անցումը, որը գիտելիքը դարձնում է արտահանման ամենակարևոր քաղաքականության մեկը, տնտեսական, արդյունաբերական նպատակներով տիեզերքի օգտագործումը, որը գործարարության համար նոր հեռանկարներ է բացում»³:

Ճիշտ է տարածաշրջանացումը հեղինակը դիտում է որպես հակակշիռ գլոբալացմանը, միաժամանակ նրա շարադրանքում, իրատեսական և ոչ առանց հիմքի է ներկայանում գլոբալացման գործընթացի անխուսափելիությունը: Անկախ տվյալ դիպվածքից նկատենք, որ հակագլոբալիստների կարծիքով, գլոբալացման բերած օգտակարության փաստարկները ոչ միայն որոշ չափով նպաստում են ժամանակակից քաղաքականության հարաբերական կայուն զարգացմանը, այլև պատճառ են դառնում բազմաթիվ հակասությունների առաջացմանը: Հակասությունը՝

- «ոսկե միլիարդի» երկրների և մնացած աշխարհի միջև, որը ենթադրում է հստակ սահման՝ հետիմդոստորիալ հասարակության և ավանդական հասարակության միջև,

¹ В. мире науки, 2006, N 1, с. 67.

² П. Ф. Друкер, Գլոբ. աշխ., էջ 322:

³ Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, հանրապետական գիտաժողովի նյութեր, Ե., 2008, էջ 371:

- պետությունների քաղաքական ռազմավարության որոշման մեջ, որքան պետությունը հետու է գտնվում կենտրոնից, այնքան մեծ ճիգեր են պահանջվում ոչ միայն այդ տեղը պահպանելու, այլև կենտրոնին մոտենալու համար: Եվ ընդհակառակը, կենտրոնի երկրները ձգտում են մրցակիցներին հեռացնել ծայրամասային հատված,
- Արևմուտքի կողմից սպառնալիք ուղարկում, քաղաքական մոդելներում և մշակութային արժեքներում ստանդարտների արմատավորման և ազգային մշակույթների միջև, որոնք ձգտում են պահպանել իրենց պատմականորեն ձևավորված նույնականությունը և յուրահատկությունը,
- ընդարձակվող աշխարհատնտեսական հարաբերությունների ազատականացման պայմաններում հռչակած հավասարության և մնացած երկրների նկատմամբ զարգացած երկրների կողմից հովանավորչական քաղաքականության միջև¹ և այլն:

Ի հայտ են եկել նոր հիմնախնդիրներ՝ կապված միջազգային ահաբեկության աճի, քմրամոլության, ՉԻԱՀ-ի և այլ երևույթների հետ, իսկ աղքատության կրճատման և շրջակա միջավայրի պահպանության խնդիրները մնում են որպես կարգախոսներ:

Ինչպես ասում է գրականագետը, «խախտվել է իրերի բնության ամենբնական ներդաշնակությունը»:

1665 թվականի ժանտախտի համաճարակի ժամանակ Լոնդոնի բնակիչները, վործելով իրենց պաշտպանել վարակից, ներս շնչելով ծաղիկների և խոտերի բույրը, ծխահարելով մահացու ժանտախտություններ, սպանելով կատուներին և աղոթելով իրենց հարևանների համար, որոնց մեղքերն էլ ինչպես նրանք կարծում էին, առաջ էին բերել Բարձրագույնի ցասումը: Եվ միայն շատ ավելի ուշ նրանք զարհուրանքով գիտակցեցին, որ ժանտախտից պաշտպանվելու միջոցներ չկան²: Արդի տնտեսական անկման վախը համակել է ոչ միայն զարգացող, այլ նաև զարգացած՝ մասնավորապես Եվրամիության երկրներին: Այդ դեպքում ինչպես զուգորդել շուկայական տնտեսության արդյունավետությունը սոցիալական արդարության և հավասարության սկզբունքի հետ: Համաձայն որոշակի հայեցողյամբ, տնտեսական անկումները միանգամայն օրինաչափ են, ինչպես ասում է Կ. Ժուզյարը «դեպրեսիայի միակ պատճառը ծաղկումն է»³:

Պ. Սամուելսոնը խոսելով տնտեսական ցիկլերի արտաքին և ներքին պատճառների մասին, կատարում է այսպիսի մի համեմատություն. մարդիկ նկատել են, որ որոշակի ձայնային հնչյունների պայմաններում պատուհանների ապակիները կամ կամերտոնը սկսում են առաջ բերել հստակ արտահայտված տատանումներ: Վերջիններս հետևանք են ինչպես արտաքին, այնպես էլ ներքին պատճառների: Ինքը՝ ձայնը արտաքին պատճառ է, սակայն ապակին կամ կամերտոնը արձագանքում են այդ ձայնին իրենց սեփական ներքին բնությամբ համապատասխան: Դրանք արձագանքում են ոչ ամեն մի ձայնի, այլ միայն որոշակի բարձրության ձայնային հնչյունի⁴: Ֆինանսական շուկայի արդի անկայունությունը ենթակա է և՛ ներքին, և՛ արտաքին պատճառների ազդեցությանը, որպես զլոբալացման հետևանք, ինչը երևույթները դարձնում է անվերահսկելի: Սա տեղադրվում է փոխտնտեսական հենց այն դարձվածքի մեջ, թե «պատճառը հետևանք է պատճառի մեջ»:

Հայ տնտեսագետների հրապարակումներում կարելի է հանդիպել միջազգային ֆինանսական ու առևտրական կազմակերպությունների տնտեսական կարգավորիչ գործառնությունների միակողմանի մեկնությունների: Հայտնի տնտեսագետ Դ. Լվովը տնտեսական գործընթացներում սպասվող վտանգները կապում է հենց այդ վերաբերական, վերազգային կազմակերպությունների գործունեության հետ: Դեռևս անցյալ դարասկզբին Վիլֆրեդո Պարետոն ուշադրություն է

¹ Т.В. Бредо, Г.Ю. Волков, О.А. Миронов, Глобализация мировой экономики, Ростов на Дону, 2008, с. 47.

² РБК (ежемесячный деловой журнал), 2008, N 10, с. 44.

³ Shi'u И. Шумпетер, История экономического анализа, Спб., 2001, с. 1479.

⁴ П. Самуэльсон, Экономика, М., 1964, с. 298.

դարձրել այն երևույթի վրա, որ առաջացել է անհամապատասխանություն ֆինանսական գործարքների ծավալների և ապրանքային գործարքների ծավալների միջև՝ ֆինանսական համաձայնությունները գերազանցում են իրական ապրանքային հոսքերը: Իսկ արդի պայմաններում պարզապես դրանց միջև առաջացել է խզվածություն, գործելով որպես իրարից անկախ ինքնուրույն հոսքեր: Ժամանակակից համաշխարհային ֆինանսական համակարգը՝ դա՝ «Յուրատեսակ գլխավար շրջված բուրգ է: Նրա նեղ հիմքը իրական ոլորտը կամ ապրանքային բարիքների հոսքը սպասարկող ֆինանսներն են: Դրանց այժմ բաժին է ընկնում համաշխարհային ֆինանսական ռեսուրսների շրջանառության ոչ ավելի, քան 10-12 տոկոսը: Մնացած ամբողջ դրամական կապիտալը գտնվում է ազատ հոսքի մեջ, որը չունի իրական նյութական բովանդակություն: Դա մի շուկա է, որտեղ փողը փող է ստեղծում, այսինքն պտուտախաղ խաղացողների շուկա է»¹:

Ժամանակակից հաղորդամիջոցները որքան հեղափոխություն նշանավորեցին հասարակության կենցաղվարության ընդհանուր պահվածքում, նույնքան մաս տնտեսության մեջ, սկսած պարզագույն հաշվարկներից մինչև հսկայական արագությամբ ֆինանսական տեղեկատվության ապահովումը ֆինանսական մագնատների կողմից՝ ամբողջ աշխարհը շղթայելով մի ընդհանուր օղակի մեջ: Նաև ազատ սպեկուլյատիվ գործարքների համար: «Համաշխարհային ֆինանսական համակարգը, ընդհանրացնում է Դ. Լվովը, ըստ էության փոխակերպվել է գլոբալ սպեկուլյատիվ կոնգլոմերատի, որը գործում է ոչ թե ազգային տնտեսությունների զարգացման, արդյունաբերական արտադրության և մարդկանց կենսամակարդակի բարձրացման, այլ «ուսկե միլիարդի» դիրքերի ամրապնդման շահերից: Դա չարորակ ուռուցք է համաշխարհային տնտեսության կենդանի հյուսվածքի վրա, որի մասշտաբները մշտապես մեծանում են: Մետաստազները ավելի ու ավելի շատ են թափանցում ֆինանսական համակարգերը: XX դարի այդ ֆինանսական ժանտախտի ընդարձակվելու վտանգավորությունը դառնում է ավելի ակնհայտ: Եթե այն չկանգնեցվի, ապա ինչպես կանխագուշակում են ժամանակակից առաջադեմ մտածողները, կարող է ծնունդ տալ XXI դարի գլոբալ համաշխարհային ճգնաժամի»²: Արդի ֆինանսական աշխարհի անկայունությունը միայն հաստատում է ասվածը: Սակայն, եթե Դ. Լվովը արդի հաղորդամիջոցների մեջ տեսնում է գլոբալ տնտեսական անկայունությունն արագացնող և պայմանավորող ազդակներից մեկը, ապա Դեվիդ Բոուզի հայեցակետը ընդհակառակը՝ այն համարում է շուկայական համակարգի առավել ազատականացման կարևոր պայման. նախ, տեղեկատվությունը դառնում է էժան և հասանելի, ուստի մարդիկ պակաս կարիք ունեն այն բանի, որ իրենց փոխարեն որոշումներ ընդունեն փորձագետները և կառավարությունը, դանդաղաշարժ կառավարությանը դժվարանալու է դիմանալ տեղեկատվության և առևտրի արագացած տեմպին, հեշտանում է պահպանելու մասնավոր գաղտնիքը, «պետությանը ավելի դժվար է լինելու իր քիթը խոթելու քաղաքացիների տնտեսական կյանքին»³: Իսկ եթե կլինեն խանգարումներ, ապա դրանք բնորոշ են կապիտալիզմի էությանը, որպես «ստեղծագործական ավերվածություններ» (կրկնելով Շումպետերին) «մարդկանց համար միշտ դժվար է եղել տեսնել շուկայի թվացող քառսի մեջ կարգ ու կանոն»⁴: Մինչդեռ իրողությունն այն է, որ անցյալ դարի 30-ական թվականների մեծ դեպրեսիայի ժամանակներից սկսած, պետության ազդեցությունը տնտեսության վրա գնալով մեծանում է: Նորբեյան մրցանակի դափնեկիր Ստիգլիցը ամերիկյան կառավարության սխալները տեսնում էր շուկայական մեխանիզմի ռացիոնալության անսխալականության հավատքի մեջ, այն միջոցառումների մեջ, որ իրականացվում էր Լատինական Ամերիկայի, Արևելյան Ասիայի, հետխորհրդային երկրներում: Նա նկատում է, թե «Երբ ես նախագահական Խորհրդի տնտեսա-

¹ Литературная газета, 2002, N 7.

² Նույն տեղում:

³ Дэвид Боуз, Либертарианство. история, принципы, политика, Челябинск, 2004, с. 327.

⁴ Նույն տեղում, էջ 329:

կան խորհրդատուների նախագահի պաշտոնից հետո զբաղեցրի համաշխարհային բանկի գլխավոր տնտեսագետի պաշտոնը, ինձ առավել անհանգստացող ներկայացավ այն փաստը, որ միջազգային վալյուտային ֆոնդը և ԱՄՆ-ի ֆինանսների նախարարությունը արտասահմանյան երկրներում իրականացնում էին որոշակի քաղաքականություն, որը հակադիր էր այն սկզբունքներին, որոնց մենք պաշտպանում էինք մեր երկրում. մեզ մոտ մենք պայքարում էինք սոցիալական ապահովության համակարգի մասնավորեցման դեմ, մինչդեռ արտասահմանի համար առաջ էինք մղում այդ սկզբունքը: Մեզ մոտ պայքարում էինք հաշվեկշռված բյուջե ենթադրող սահմանադրական փոփոխությունների դեմ, որը կսահմանափակեր մեր հնարավորությունները անկման դեպքում իրականացնելու էքսպանսիոն գանձարանային քաղաքականություն, բայց արտասահմանում պահանջում էինք բյուջետային ծախսերը կրճատել այն երկրներում, որտեղ սկսում էր ետան: Տանը պայքարում էինք դեբիտորներին պաշտպանող սնանկացման օրենքի համար, արտասահմանում սնանկացումը դիտում որպես վարկային պայմանագրի խախտում: Մեզ մոտ իրականացվում էին փոփոխություններ նոր աշխատատեղերի ստեղծման ուղղությամբ, արտասահմանում պահանջում էինք, որպեսզի կենտրոնական բանկերը զբաղվեն միայն ինֆլյացիայի խնդրով: Եվ այսպես Միացյալ Նահանգներում մենք ընդունում էինք շուկայական մեխանիզմի սահմանները և գտնում էինք, որ պետությունը պետք է խաղա կարևոր (թեև սահմանափակ) դեր: Ու թեև մենք մնացած աշխարհի համար քարոզում էինք շուկայական ֆունդամենտալիզմ¹, որին չէինք հավատում, ինչպես և այն կոնցեպցիային, համաձայն որի շուկայական մեխանիզմը կարող է լուծել տնտեսության (և հասարակության) բոլոր հիմնահարցերը»:

Շուկան դիտվում է որպես մի գերբնական հաստատություն, որը տանում է միասնական պետության, նոր գլոբալ աշխարհակարգի ստեղծմանը, որտեղ բացակայում է ազգայինի գաղափարը: Ինչպես, որ միլիոնավոր մեքենաների երթևեկությունը կառավարվում է սպոնտան ձևով, ոչ մեծ թվով որոշակի կանոնների պահպանման արդյունքում՝ երթևեկել աջ կողմով, հետևել լուսակիրներին, ձախ շրջադարձի ժամանակ զիջել ճանապարհը և՛ այլն, այսպես էլ՝): Բոուզին թվում է, թե մարդիկ սկսել են հավատալ սահմանափակ կառավարության և ինքնավարության առավելություններին, վկայակոչելով ադրբեջանիցի մի ուսանողի այն խոսքերը թե, «Մենք, իմ ընկերների հետ մտածել ենք, միթե չի կարելի հակասությունը հայերի և ադրբեջանցիների միջև լուծել առանց սահմանները տեղաշարժելու, այլև անտեսելով դրանց կարևորությունը՝ ներքին անճնազորերը վերացնելու, սեփականությունը տնօրինել թույլատրելու և սահմանի երկու կողմերում աշխատելու իրավունք վերապահելու միջոցով»²:

Դիշտ է ասված, թե այն ամենն ինչ կատարվում է մարդկության պատմության հետ՝ մարդկանց ձեռքի գործն է, «Եվ նույնիսկ, եթե դա Աստծո զբաղմունքն է, ապա մարդը ակտիվորեն մասնակցում է նրա իրականացմանը:

Գլոբալացումը անտիքրիստոսի զբաղմունքն է, վերջին գալթակությունը»³:

¹ Джозеф Стиглиц, Революция девяностые, М., 2005, с. 279-280.

² Дэвид Боуз, н.շ.վ. աշխ., էջ 325:

³ Литературная газета, 2005, N 53.